

20. 2/2

Орелъ

Клеветыча Г.И.

329.14

2-72

1931/2



Հնչակեան Գուսակերութեան Հրատարակութիւն

0334

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՉՈՐՐՈՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՆՆԵՐԻ ՄԵՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

ԿՆԸ 5 ՁԲԱՆԳ



Փ Ա Ր Ի Ձ

Տպ. Յ. Բ. ԹԻՐՍՊԵԱՆ

227, Boulevard Raspail, 227

1931

15 JAN 2010

Հնչակեան Կուսակցութեան Հրատարակութիւն

05 FEB 2007

329.14
Հ-72

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԶՈՐՐՈՐԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

1 ՀԱՅՐԵՐԸ ՄԵԿԱՌԻԹՈՒՆՆԵՐՈՎ



ԳԻՆԸ 5 ՖՐԱՆԿ



Փ Ո Ր Ի Ջ

Տպ. Յ. Բ. ԹԻԻՐԱՊԵԱՆ

227, Boulevard Raspail, 227

1931

334
10334

06. 2013

20.2/2

Յաճախ կը պատահի որ, հայ զանազան շրջանակներու մէջ, կը խօսին, նոյն իսկ ջերմօրէն կը վիճաբանին Ս. Գ. Շնչակեան Կուսակցութեան վրայ, ումանք՝ թագուն նպատակներով, ուրիշներ՝ տգիտութեամբ, անտարբերութեամբ եւ կամ միայն ժամանակ անցնելու համար, առանց որոշ գաղափար կազմած ըլլալու այդ Կուսակցութեան ծրագրին վրայ: Շնչակեանութիւնը շատերուն խօսակցութեան, վիճաբանութեան եւ քննադատութեան նիւթ է եղեր, եւ է այսօր ալ, լոկ ա՛յն պատճառով որ ան, ծնունդ հայ իրականութեան, 44 երկար տարիներէ ի վեր, կը գործէ հայ ժողովուրդին զանազան խաւերուն մէջ՝ իր հոգածութեան մասնաւոր առարկայ դարձնելով նոյն ժողովուրդին խոնարհ կամ աշխատաւոր դասակարգը, դասակարգ որ, ինչպէս ամէն կազմակերպուած ժողովուրդի մէջ, Բոյուրութեան ալ գոյութեան պատճառն եւ անոր նէթական ու բարոյական բարգաւաճումին միակ գործօնն է:

Ի՞նչ է Շնչակեան Կուսակցութեան ծրագիրը, ի՞նչ է անոր դաւանանքը, որո՞նք են անոր ընկերային եւ քաղաքական ձգտումները, որո՞նք են անոր ընդգրկած սկզբունքներն ու ընտրած ուղին, ինչո՞վ կը զանազանի ան հայ կեանքին մէջ գոյութիւն ունեցող միւս Կուսակցութիւններէն:

Ահա այսպիսի եւ նման հարցերու պատասխանելու եւ հասարակութիւնը լուսաբանելու նպատակով լոյս կ'ընծայուի Ս. Գ. Շնչակեան Կուսակցութեան ծրագիրը, որ հրատարակուեցաւ 1888ին, այսինքն Կուսակցութեան հիմնուելէն մէկ օրի յետոյ:

ՀՆԶՈՎԵՌՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵՌՆ ԿԵՆՏՐՈՆ

Փարիզ, 30 Մարտ 1931



3297-2002 (1591-2002)

Ծ Ր Ա Ք Ի Ր

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Բ Ա Փ Ի Ն Ա .

Մարդկութեան ահագին մեծամասնութիւնը կազմող աշխատակոր, արդիւնաբերող դասակարգի կատարեալ ազատումն (émancipation) ամէն շահագործութիւնից եւ սեփականազուրկ ստրկական դրութիւնից, որոնց նա ենթակայ է կապիտալիստ, սեփականատէր ու իշխող փոքրութիւ դասակարգի կողմից — կը լինի միմիայն այն ժամանակ, երբ արդիւնաբերութեան բոլոր ոյժերի ու միջոցների, որպիսիք են հողը, գործարանը, հանքերը, հաղորդակցութեան ու նիւթական յարաբերութեան ամէն միջոցները, եւայլն; *Լ. Կոչարյան*

Ծ Ր Ա Ք Ի Ր

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Բ Ա Յ Ի Ն Ա .

Մարդկութեան ահագին մեծամասնութիւնը կազմող աշխատաւոր, արդիւնաբերող դասակարգի կատարեալ ազատումն (émancipation) ամէն շահագործութիւնից եւ սեփականագործի ստրկական դրութիւնից, որոնց նա ենթակայ է կապիտալիստ, սեփականատէր ու իշխող փոքրութիւ դասակարգի կողմից — կը լինի միմիայն այն ժամանակ, երբ արդիւնաբերութեան բոլոր ոյժերի ու միջոցների, որպիսիք են հողը, գործարանը, հանքերը, հաղորդակցութեան ու նիւթական յարաբերութեան ամէն միջոցները, եւայլն; *Կապիտալիստ*

Ազատումն արդիւնաբերող դասակարգի՝ նշանակում է ազատումն ամեն մարդու, երկուսեօին էլ պատկանող, նշանակում է հասարակական-տնտեսական կատարեալ ազատութիւն ամբողջ մարդկութեան:

Ներկայ քաղաքակիրթ մարդկութեան հասարակական՝ կապիտալական կոչված՝ կազմակերպութեան պայմաններն, իրանց զարգացման ընթացքում, իրանց արգանդից, իրանց ձեերի միջից բնական կերպով ծնունդ են տվել ու առաջացրել սեփականատիրութեան մի նոր ձեւի ամեն մտաւոր ու նիւթական տարբերը: Այդ նոր ձեւն է՝ արդիւնաբերութեան բոլոր միջոցների ու արդիւնքի սեփականութեան հաւաքական (collectif). հասկանալի ձեւը, որով նրանք կը լինեն ընդհանուր սեփականութիւն արդիւնաբերող հասարակութեան:

Իր այդ պատմական նպատակն ու գործնի կատար ածելու համար, ամէն քաղաքակիրթ երկիրներում, արդիւնաբերող դասակարգը պէտք է կազմակերպվէ իբրեւ քաղաքական ինքնաձանաչ ու ինքնուրոյն կուսակցութիւն

Շե իր արամադրութեան տակ գտնված ամեն հասարակական ու քաղաքական միջոցները գործ դնելով եւ բոլոր երկրներից իրար հետ միանալով, ձգտէ կատարել կոմիւնիստական, սոցիալական յեղափոխութիւնը: Այդ յեղափոխութեամբ արդիւնաբերող դասակարգն իր ձեռքը կը քցէ քաղաքական ղեկը, խլելով այն ներկայումս իշխող դասակարգից, վերջ կը դնէ տարբեր դասակարգերի գոյութեան ու նրանց մէջ եղած դասակարգային կռուին եւ կը հաստատէ սոցիալական հասարակական կազմակերպութիւն:

Այդ հասարակական կազմակերպութիւնն իրական կարելիութիւն կը տայ, ուղղակի ժողովրդային օրէնսդրութեան ձեւի տակ, ամբողջ հասարակութեանը եւ իւրաքանչիւր անհատին միջամտելու, քննելու ու վճռելու բոլոր հասարակական գործերն ու դրանց կարգադրութիւնները. այդ կազմակերպութիւնը լիառատ ու անբռնաբարելի կերպով կը նպաստէ իւրաքանչիւր անհատի եւ ամբողջ հասարակութեան բոլոր անհատական, տնտեսական ու հասարակական ոյժերի, ընդունակութիւննե-

րի ու կարողութիւնների լիակողմանի ու կատարեալ զարգացման եւ ներդաշնակ ու որոշ կերպով կը կանոնաւորէ հասարակական ու տնտեսական բոլոր յարաբերութիւնները:

Դա է արդիւնաբերող դասակարգի պատմական ձգտումն ու նպատակը՝ կապիտալական արդիւնաբերութեան տիրապետութիւն ունեցող ամեն երկիրներում. դա է այդ երկիրների նաեւ սօցիալիստ-ուսմկավարականների ձրգտումների նպատակակէտը: Դա՛ է այն հասարակական կազմակերպութիւնը, որ երեք լծի տակ ճնշված՝ իբրեւ իր ձգտումների իդէալ, իբրեւ հեռաւոր նպատակ՝ դրել է իրան «Հընչակը» եւ իր Կուսակցութիւնը:

Բ Ա Ժ Ի Ն Բ .

Հայ Ժողովուրդը ներկայումս գտնվում է միապետական-քաղաքական կարգերի տակ, որոնց կառավարական, հարկային ու ֆինանսական սխտէմներն աւերիչ են նրա համար. նա գտնվում է նաեւ այնպիսի տնտեսական մի շրջանում, երբ մի կողմից սկսել են ծագել արդիւնաբերութեան կապիտալական կերպեր եւ, միւս կողմից, շարունակ ընկնում ու քայքայ-

վում են տնտեսական նահապետական կերպերը: Այդ բոլոր պայմանների շնորհով է, որ հայ սօցիալիստ-ուսմկավարականի համար սօցիալիստական հասարակական կազմակերպութեան իրագործումը հայութեան մէջ՝ յայտնվում է հեռաւոր նպատակ, եւ նրա գործունէութեան ու ձգտումների առաջ ներկայանում է մէկ ուրիշ անմիջական պահանջ, իբրեւ մօտակայ նպատակ: Ահա հէնց այդ մօտակայ նպատակն է, որ գործնականապէս դրված է հայ սօցիալիստ-ուսմկավարականի, հայ յեղափոխականի առջեւ, Հնչակեան Կուսակցութեան առջեւ:

Այդ մօտակայ նպատակը կայանում է հետեւեալում. — Յեղափոխել ու ոչնչացնել միապետական կարգերը, փրկել հայ Ժողովրդին իր ընդհանուր ստրկական դրութիւնից, տալ նրան քաղաքական կարելիութիւն միջամտելու քաղաքական գործերում, վերացնել այն խոչընդոտները, որոնք արգելք են լինում նրա տնտեսական զարգացման, առհասարակ նրա կուլտուրական առաջդիմութեան, ստեղծել քաղաքական պայմաններ, որոնք այնպատուար

դասակարգին միջոց տան ազատ կերպով արտայայտելու իր ձգտումներն ու պահանջները, աւելի ու աւելի բարեբաւելու աշխատանքի ծանրը պայմանները, դասակարգային գիտակցութիւն ձեռք բերելու ու կազմակերպվելու իբրեւ ինքնուրոյն քաղաքական մարմին՝ եւ դիւրացնելու նրա այն բոլոր հասարակական ջանքերը, որոնք պէտք է, ամեն տրամադրելի հասարակական պայմանների միջոցով, նպաստեն նրա առաջխաղացութեան դէպի հեռաւոր նպատակը:

Այդ բոլոր նկատումների հիման վրայ Հընչակեան Կուսակցութեան մօտակայ նպատակն է — կռիւ մղել՝ միապետական կարգերը տապալելու համար եւ նրանց փոխարինելու հանրային ռաւկալարական սահմանադրական կարգերով, որոնց հիմնական պայմանները պէտք է լինեն հետեւեալները. —

1) Մշտական ժողովրդային ներկայացուցչութիւն, Օրէնսդիր ժողով, ընտրված ժողովրդային ընդհանուր եւ ուղղակի քուէարկութեամբ: Օրէնսդիր ժողովը պէտք է ունենայ բոլոր իրաւունքները քննելու ու վճռելու եր-

կրի քաղաքական, տնտեսական ու հասարակական բոլոր հարցերն ու օրէնքները: Նա պէտք է ունենայ օրէնսդրական ամեն իրաւունք:

2) Նահանգային ընդարձակ ինքնավարութիւն:

3) Համայնական ընդարձակ ինքնավարութիւն:

4) Համայնքը տէր է եւ ամեն իրաւունք ունի ընտրելու — վարչութեան անդամներին, հասարակական ամեն պաշտօն, ոստիկանութիւն, դպրոցական հոգաբարձութիւն եւ այլն:

5) Թէ Օրէնսդիր ժողովի համար եւ թէ՛ նահանգային ու համայնական ինքնավար վարչութիւնների համար ներկայացուցիչներ ընտրելու, որպէս եւ ընտրելի լինելու իրաւունք ունի ամեն չափահաս քաղաքացի, առանց խտրութեան ազգութեան, դասակարգի ու կրօնի:

6) Բոլոր քաղաքացիներին, առանց ազգութեան ու կրօնի խտրութեան, կատարեալ հաւասարութիւն օրէնքի առաջ:

7) Կատարեալ ազատութիւն մամուլի,

խօսքի, խղճի, գումարման, ընկերութիւնների եւ ընտրական ազիտացիայի:

8) Ամեն քաղաքացիի անձն ու բնակարանն անձեռնմխելի են:

9) Եկեղեցին կառավարութիւնից զատված է. նա պահպանվում է միմիայն իր յաճախորդների օժանդակութեամբ:

10) Ընդհանուր ժողովրդի գինաւորութիւն: Սաղաղ ժամանակն՝ ազգային միւլիցիա:

11) Ընդհանուր, աշխարհական (laïque) պարտաւորեցուցիչ կրթութեան սիստէմ: Կառավարական օժանդակութիւն չքաւորներին:

Ժողովրդի անտեսական դրութիւնը բարենորոգելու վերաբերութեամբ անհրաժեշտ է՝ վերոյիշեալ քաղաքական իրաւունքները ձեռք բերելով եւ դրանց հիման վրայ՝ ձգտել իրականացնելու հետեւեալ պայմանները. —

1) Հարկային ներկայ սիստէմի վերացումն եւ հաստատումն հարկային առաջադիմող սիստէմի՝ որոշ չափի կարողութիւնից վեր:

2) Անուղղակի հարկերի իսպառ ոչնչացում:

3) Գիւղացուն ազատել ամեն տեսակ պարտքերից:

4) Համայնքի կամ կառավարութեան օժանդակութեամբ ներմուծել հողի մշակութեան մեքենայական սիստէմ, ըստ որում այդ մեքենաները դարձնել սեւիականութիւն համայնքի:

5) Կազմութիւն համայնական հողագործական ընկերութեան, որի նպատակը պէտք է լինի հողագործական արդիւնքների վաճառահանելը եւ սերմ, հունտ, պարարտութեան նւիրթ եւ այլն գնումն ու մատակարարումը:

6) Հաղորդակցութեան ամեն միջոցների հաստատութիւն:

7) Աշխատանքը չահագործութեան դէմ հովանաւորող օրէնքներ, կառավարական օժանդակութիւն, եւ այլն:

Բ Ա Փ Ի Ն Գ .

Նկատելով, որ հայութեան ամենաստուար մեծամասնութիւնը կազմում են Թիւրքահայերը եւ նրանց բնակավայրը մեր հայրենի հողի ամենամեծ տարածութիւնն է.

Նկատելով, որ հայութեան այդ մեծամասնութեան Դատք, Բեռլինի Դաշնագրութեան ճշրդ յօդուածի զօրութեամբ, որպէս եւ այլ միջազգային պայմանագրերի զօրութեամբ, արդէն մտած է միջազգային իրաւունքի դրական շրջանը եւ ճանաչված եւրոպական մեծ պետութիւնների կողմից.

Նկատելով միւս կողմից, որ Թիւրք ակնութեան միապետական կարգերը քաղաքական, հասարակական ու տնտեսական անտանելի ճնշման են ենթարկում Հայ ժողովրդին.

Նկատելով, որ ամեն տեսակէտից այդ դրութիւնն անպայման կերպով անհնարին է դարձնում հայ ժողովրդի հասարակական-տնտեսական ու քաղաքական որ եւ է առաջադիմութիւն, որպէս նաեւ մշտական սպառնալիք ու զէնք է նրա ազգային ու մարդկային գոյութեան դէմ.

Նկատելով նաեւ Թիւրք կայսրութեան քաղաքական, տնտեսական, Փինանսական ու նիւթական ամենատնկարգ, անկեալ ու սնանկացած դրութիւնը եւ գրա ու ներքին խռովութիւնների ու ցնցումների պատճառով այլ

եւս հաւաստի ու անխուսափելի է դարձած Թիւրք պետութեան կործանումը, որին միւս կողմից էլ նպաստում են եւրոպական տէրութիւնների յաճախ հարուածները, ինչպէս նաեւ եւրոպական Թիւրքիայում եւ այդ կայսրութեան այլ մասերի սխտէմարտ պատառպատա լինելն, ընկնելով ուրիշ պետութիւնների ձեռքը.

Այդ բոլոր նկատումների հիման վրայ պատմական առաջնակարգ անհրաժեշտութիւն է —

1) Որ հայ յեղափոխական գործունէութիւնն այսօր բացառապէս նուիրվէ Թիւրքահայ ժողովրդային դատի պաշտպանութեան ու լուծման՝ համաձայն մօտակայ նպատակի.

2) Որ, ուրեմն, յեղափոխական գործունէութեան ասպարէզն է Թիւրքա-Հայաստանը.

3) Որ Հայ ժողովրդի ու Հայաստանի ճակատագիրը միանգամից ընդ միշտ պէտք է գաւլի Թիւրքական կայսրութեան ճակատագրից, ըստ որում պատմական պահանջ ու անհրաժեշտութիւն է ներկայանում — Հայ ազգային անկախութիւնը, որն էլ այդպիսով

կազմում է մօտակայ նպատակի մի հիմնական մասն ու առաջին պայմանը:

Բ Ա Փ Ի Ն Դ .

Մօտակայ նպատակին հասնելու միակ միջոցն է — յեղափոխութիւնը, այսինքն պէտք է բռնի կերպով կերպարանափոխել, յեղաշրջել ներկայ հասարակական կազմակերպութիւնը թիւրքաց Հայաստանում, կռիւ մղելով թիւրք տէրութեան դէմ՝ ժողովրդային ընդհանուր ապստամբութեան միջոցով:

Այդ գործունէութեան միջոցներն են —

1) Պրօպագանդա եւ ագիտացիա, մամուլի, գրքերի ու խօսքի միջոցով, ազգի մէջ մեն շրջաններում եւ գլխաւորապէս ու առաջնապէս ժողովրդային աշխատաւոր դասերի մէջ, տարածելով Հնչակեան-յեղափոխական գաղափարներ եւ կազմակերպելով նրանց մէջ յեղափոխական կազմակերպութիւններ ու ապստամբական գնդեր:

2) Տէնօրական գործողութիւն, իբրև պատիժ թիւրք բռնաւորներին, որպէս եւ լրտեսներին, մատնիչներին, դաւաճաններին: Տէնօ-

րը պէտք է լինի յեղափոխական կազմակերպութեան ինքնապաշտպանութեան միջոց եւ հասարակութեանը բռնաւորների ու վատերի գործերից պաշտպանելու համար մի զէնք:

3) Ասպատակային գնդերի կազմութիւն, իբրև մշտական պատրաստի մարտական ոյժ կառավարական զօրքերի կամ այլ վայրի ցեղերի յարձակումներին դիմադրելու համար, ժողովրդին պաշտպանելով: Ընդհանուր ապստամբութեան միջոցին այդ գնդերը կորոզ են կատարել առաջաւոր-գնդերի դեր:

4) Կազմակերպութիւնն ընդհանուր կուսակցութեան՝ պէտք է բաղկացած լինի բազմաթիւ կազմակերպված խմբերից, որոնք մենքը սերտ կերպով կապված են միմեանց հետ, իբրև մէկ եւ ամբողջ մարմին, մի կանոնաւոր ամբողջութիւն, մէկ եւ ընդհանուր համատիպ ուղղութեամբ ու տակտով գործող, ենթարկված ընդհանուր կազմակերպութիւնը ղեկավարող մի կենտրոնական մարմնի: Կազմակերպութեան բոլոր ներքին կարգերն ու դրանց տրամադրութիւնները նախագծված են թիւրքաց Հայաստանում Հնչակեան կուսակ-

1591-2002
1897-1902



ցութեան գործունէութեան ու կազմակերպական յատուկ Ներքին Կանոնագրում:

5) Ապստամբական գորագնդերի կազմութիւն:

6) Ընդհանուր ապստամբութեան ժամանակը. — Որ եւ է պատերազմ՝ մղած այս կամ այն տէրութեան կողմից թիւրքիայի դէմ՝ պէտք է համարել յարմար րոպէ մօտակայ նպատակի իրագործման համար:

Բ Ա Ժ Ի Ն Ե .

Վաստակել հայ ժողովրդին վիճակակից Հայաստանի այլ բնակիչներին, որպիսիք են Ասորիները, Քիւրդերը, համակրութիւնը դէպի յեղափոխական գործը եւ նրանց աջակցութիւնն այդ գործում, որը միաժամանակ յայանալում է նաեւ նրանց, իրրեւ նոյն բունակարութեան տակ ճնշված ժողովրդների, ազատութեան գործը:

Համերաշխ գործակցութիւն հաստատել թիւրքական լծի տակ հեծող այլ քրիստոնեայ ազգերի յեղափոխական մարմինների հետ,

որոնց հետ ջանալ, եթէ հանգամանքները ներեն, միատեղի ապստամբել ընդհանուր թըշնամու, թիւրք կառավարութեան, դէմ:

Հնչակեան Կուսակցութեան ամենաջերմ իղձն է — Ընդհանուր անկախ Դաշնակցութիւն, նման Շվէյցարիայի դրութեան, բոլոր փոքրիկ ազգերի Արեւելքում, երբ դրանցից մնացածներն էլ ազատված կը լինեն թիւրքական լծից:

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԲԱԺԻՆ Ա. ԵՒ ԲԱԺԻՆ Բ.

ՍՕՑԻԱԼԻԶՄ. — ՀԵՌԱԻՈՐ ՆՊԱՏԱԿ. — ՄՕՏԱԿԱՅ
ՆՊԱՏԱԿ. — ՔԱՂԱՔԱՑՈՒ ԵՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ-
ՆԵՐ. — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

1 .

Ո՞ր մէկը նրանցից, որոնք գիտեն զգալ ու մտա-
ծել, գիտելով իրանց շրջապատող կեանքը՝ չեն տան-
ջըվել հետեւեալ հարցերով. — Ինչո՞ւ համար դոյութիւն
ունի աղքատութիւնը, թշուառութիւնը մի կողմից և
միւս կողմից հարստութիւնը, փարթամութիւնը, շա-
հազործութիւնը: Ինչո՞ւ համար այդ մէկը, որ աշխա-
տում, քրտինք է թափում օրն ի բուն, ամէն օր սպա-
ռելով իր ֆիզիքական ոյժերը, — ինչո՞ւ այդ մէկը
հազիւ կարողանում է լոկ մի խիստ անձուկ ապրուս-
տի միջոցները հայթայթել, մինչդեռ այն միւսը, որ չէ
աշխատում ֆիզիքապէս ո՛չ գործարանում, ո՛չ հողի
վրայ եւ ո՛չ էլ առհասարակ ուղեղով՝ ուսման ու զի-
տութեան մէջ, — ինչո՞ւ այդ միւսը փարթամ ու լայն
կերպով վայելում է առաջինի աշխատանքը, իր ձեռքն
անցրած լինելով ամեն հարստութիւն — դրամական ու
առարկայական կապիտալներ՝ շահագործում է այն
առաջինին՝ աշխատաւորին, դարձնում նրան իր գործի-

քը, իրը: Մի՞թէ այդ երկուսն էլ միեւնոյն կենդանա-
կան ցեղից չե՞ն, մարդիկ չե՞ն, որ ծնված են մի-մի
մօրից, ուրեմն միմեանց հաւասար՝ իրենց ծնունդով:
Բայց հէնց որ սկսում են շնչել, ինչո՞ւ նրանցից մէկի
վախա մարմինն ամփոփում են շքեղ օրօրոցում, թա-
ւիչների, մետաքսների մէջ, մինչդեռ միւսինը փաթա-
թում ամեն տեսակ փայտաներում: Ինչո՞ւ համար դո-
յութիւն ունի այդ անհաւասարութիւնը ո՛չ թէ բնու-
թիւնից, բնական օրէնքով, այլ առաջին շնչից յետոյ,
սկսած օրօրոցից, մինչդեռ նրանք երկուսն էլ միեւնոյն
բնական ու հաւասար իրաւունքն ունեն ապրելու ու
աճելու: Եւ յետոյ, երբ այդ երկուսն էլ, մեծանալով
բոլորովին տարբեր շրջաններում, բնկնում են կենսա-
կան ծովում, նրանցից մէկը, աշխատաւորի որդին,
արդէն վաղուց, փոքրութեան հասակից ի վեր, վարում
է աշխատաւորի չարքաշ կեանքը, ապրելով սեւ թըշ-
ուառութեան ու զրկանքների մէջ, անալով անուս, սը-
գէտ, օտար ամեն մտաւոր ու հոգեկան վայելքներին,
որոնք անմատչելի են մնացել նրա համար: Իսկ միւ-
սը... օ՛, այս մէկը — մեծացած մի գեղիս կեանքի
միջնորդութեամբ, որտեղ տիրում է նախապաշարում, շին-
ծութիւն, ինքնապաշտութիւն, կոյր ինքնարաւակա-
նութիւն, այդ մէկին է վիճակված ճաշակել հանգստի
և ամեն տեսակ հաճոյքների քաղցրութիւնը, ոչինչ
չարտաբերել և վայելել ամեն բան: Եւ սակայն բնա-
կանից այդ երկուսն էլ ծնվեցան հաւասար: Ինչո՞ւ հա-
սարակութիւնը նրանց չը դրեց յար և նման պայման-
ներում հէնց առաջին օրից, պայմաններ ո՛չ էլ թշուառ
և ո՛չ փարթամ, այլ միակերպ բարեկեց: Ինչո՞ւ էլ

տվեց նրանց երկուսին էլ կրթութեան և զարգացման մէկ ընդհանուր պայման, մէկ ընդհանուր մեկնման կէտ... Երկուսն էլ չե՞ն արդեօք քաղաքացի-անդամներ մարդկութեան, կոչված նրան ծառայելու, հետեաբար արժանի հանրութեան խնամքին, որը հասարակութեան պարտականութիւնն է: Եւ եթէ այդպիսի հաւասար ու բարերար, դիտութեան պահանջների համաձայն պայմաններ լինէին նրանց վրայ տարած խնամքի, նրանց կրթութեան, նրանց զարգացման պայմանները, ո՞վ կարող է չընդունել, որ նրանք երկուսն էլ կը լինէին արժանի իրանց կոչման, ադնիւ գգացումներով ու մտքերով օժտված, ունենալով իրանց ձեռքին հաւասար զէնքեր ու համընթաց աշխատութիւն՝ իրանց ընդհանուր, այն է անհատական զարգացման և մարդկութեան շահերի ու առաջադիմութեան համար:

Ի՞նչ է պատճառը, որ կեանքում այդպէս չէ, որ գոյութիւն ունի ծայրայեղ անհաւասարութիւնը, որ հասարակութիւնը բաժանված է, ընդհանուր առմամբ, երկու դասակարգի վրայ՝ շահերով իրար հակառակ և կենցաղով իրարից բոլորովին տարբեր — մէկն՝ աշխատաւոր և միւսը վաճառող ու շահագործող... Եւ դարձեալ կայ սոյն հետեւեալ հարցը — ինչո՞ւ համար կան ամեն տեսակ անարդարութիւններ, ոճիրներ, վատութիւններ, պատերազմներ, և այլն: Որո՞նք են վերջապէս այդ անհաւասարութեան և հասարակական բոլոր մնացած երեւոյթների սկզբնապատճառները և նրանց տեսողութեան պայմանները:

Եւ այդ հարցերի առաջ մնում է շուտաւ այն մէկը, որ միջոց չէ ունեցել ուսումնասիրելու մարդկային

հասարակութեան պատմական կեանքը և նրա զարգացման ընթացքը: Նահապետական հին խելքերն այդ դէպքում ամեն բան դրում են նախախնամութեան վերայ, և խեղճ ու անբաղդ Ադամի ու Եւայի մեղքերի վրայ, այդ նախախնամութեան, այդ մեղքերի մէջ տեսնելով առաջին ու վերջին պատասխանն իրանց հարցերին: Եւ այդ նահապետական խելքերը մտածում են, թէ իբր սկզբից ի վեր մարդկութեան մէջ գոյութիւն են ունեցել հարուստ ու աղքատ. թէ այդպէս լինելով այժմ, այդպէս էլ կը լինի միշտ, թէ այդ է նախախնամութեան սահմանած օրէնքը: Եւ այդ մեռելայային համոզումն օրինակ ու յաւիտենական է համարում մարդկութեան անազին մեծամասնութեան, այն է աշխատաւոր բազմութեան նիւթական ստրկութիւնը, թըշուառութիւնը, չարատանջ կեանքն ու աշխատանքը՝ սակաւաթիւ հարուստ, ունեւոր դասակարգի օգտին, որն իշխող լինելով նիւթականապէս, իշխող է հանդիսանում նաև հասարակական ու քաղաքական շրջաններում: Եւ ունեւոր դասակարգը շարաշար օգտվում է այդ նահապետական տրամաբանութիւնից, որ ամբողջովին ծառայում է իր շահերին և յանուն զրիստոնէական վարդապետութեան՝ ամեն տեսակ եղանակներով երզում՝ իբրև զրիստոնէական սէրէնազ (ցալերեզ)՝ թշուառ բազմութեան ականջին՝ «խմս է երկրային փառքն ու վախէլքը, թող ըեզ լինի երկնային արքայութիւնը, իմս է աշխատանքիդ արդիւնքը. այդպէս է սահմանել նախախնամութիւնը»: Սքանչելի երզ առուածալախ մի հոգու, այնպէս չէ... Ի՞նչ հեղհուութիւն... Իսպց այդպէս չեն խօսում զնոյ ու դարդա-

ցած խելքերը, որոնք հրաժարվել են այդ սոսկալի համոզումից, եթէ երբ և է ունէին: Նրանք անարդար, անխմաստ, յոռի են դառնում այն, որ սովորութիւնն ինչ որ նախախնամութեան է վերադրել, կաշկանդելով մարդկային մտքի ազատ ու անկախ քննութիւնն ու ընթացքը, ցամաքեցնելով մարդկային նախաձեռնութեան աղբււրը, օրինական համարելով ամբողջ մարդկութեանը կերակրող աշխատաւոր ընդհանրութեան կեանքի դժոխք լինելը, օրինական համարելով աշխարհումս հաստատված այն արքայութիւնը, որի մէջ վարում է իր կեանքն ունեւոր դասակարգը, դասակարգ չաշխատող, չարտադրող, վայելող, ուրիշի քրտինքով ապրող: Եւ անկախ ու քննող խելքերը դարձնում են իրանց նախաձեռքը դէպի գիտութիւնը, միայն դէպի գիտութիւնը, որը՝ մարդկային հասարակութեան ամբողջ պատմական կեանքի ուսումնասիրութեամբ՝ նրանց պատասխանում է ըտրրովին այլ կերպ:

I I .

Երկար ժամանակ այն կարծիքն էր տիրում, որ մարդկային թշուառութիւնների պատճառն ինքը մարդըն է, նրա չար կամքն է, մի պատմական թիւրիմացութիւնն է մարդկանց մէջ: Ենթադրվում էր, որ մարդկային կամքն ընդունակ է և կարող է հասարակային յայտնի պայմանաւորութեամբ, մարդկանց մէջ վերակարգել մարդկութեան հանրակացութիւնը, վերացնել հասարակութեան դանազան խաւերի մէջ դէպի իրան սենեցած թշնամութիւններն ու հակառակութիւնները և հաստատել կեանքի մէջ ոսկէ դար՝ անվերջ

վայելքներով, համերաշխ յարաբերութիւններով: Քիչ աւելի հետոս գնալով՝ այդ հայեցողութիւնը սկստ մեղադրել գանազան անհատներին, իշխող, կառավարող անհատներին ու քաղաքական մարմիններին, դրանց չար կամքը համարելով առաջին ու վերջին պատճառ մարդկան թշուառութիւնների և առաջին ու վերջին արդելք նրա ամեն առաջադիմութեան ու բարօրութեան: Այդ հայեացքներն, ի հարկէ, չափազանց վերացական էին, որ չէին հիմնվում ոչ մի գիտական հետազոտութեան վրայ՝ մարդկութեան հասարակական յարաբերութիւնների շրջանում: Մինչև մեր օրերն իսկ տակաւին շատ-շատերն ունեն այդպիսի կարծիք և անիշխանական կոչված հայեացքների մի մեծ մասը նոյն այդ ոգին է կրում: Բայց գիտութեան զարգացումով՝ մարդկային խելքը սկստ հարց տալ, թէ որո՞նք են թշուառութիւնների հասարակական, կենսական պատճառները, որո՞նք են հասարակութեան դանազան խաւերի դէպի միմեանց ունեցած հակառակութիւնների շարժառիթները և արդեօք մարդկային կամքը մինչև ո՞ր ստտիճան կարող է հասարակական, կենսական տիրող պայմաններից անկախ լինել և անկախ դործել: Գիտական մտքի հետազոտութեան շարունակութիւնն առաջացնում էր դարձեալ նորանոր հարցեր, — թէ մարդկային թշուառութիւնների, կենսական անվերջ կռիւների հիմնական պատճառները չե՞ն գտնվում արդեօք մարդկութեան զուտ նիւթական (matériel) յարաբերութիւնների մէջ, ապրելու, ուտելու, արդիւնաբերելու, աշխատելու եղանակների ու ձևերի մէջ. թէ արդեօք այդ յարաբերութիւնները չե՞ն, որոնք կեան-

քի, գոյութեան հիմնական ու գլխաւոր պայմաններն են և որոնք գծում են առհասարակ հասարակութեան ու մասնաւորապէս նրա դանազան խաւերի պատմական ուղին, գործերը և պատճառում դրանց, այդ խաւերի, հակառակութիւններն ու կոիւնները. և թէ արդեօք մարդն, անհատն իր ընթացքով ու հոգեկանով ենթարկւած չէ՞ թէ՛ ընտելեան, կլիմայի ազդեցութեան և թէ գոյութեան այդ վերոյիշեալ տրուեստական պայմաններին:

Դնել այդպիսի հարցեր նշանակում էր հետազոտել նրանց հիմնական կերպով, և գիտութեան զարգացման աստիճանն արդէն թոյլ էր տալիս որոշապէս պատասխանել այդ հարցերին: Դարուս մէջ, մասնաւոր երկրորդ կէտում, արած գիտական հետազոտութիւնները կատարելապէս ապացուցանում են, որ մարդկային հասարակութեան ամենանախնական, սկզբնական կեանքի տնտեսական պայմանները համայնական, հաւաքական են եղել: Երկիրը, դաշտերը չէին պատկանում անհատներին, ինչպէս յետոյ եղաւ և այժմ է, այլ ընդհանուր սեփականութիւն էին ամբողջ հասարակութեան, համայնքին կամ ցեղին: Արօտատեղիները, անտառները, նոյնպէս պատկանում էին ամենքին միաժամանակ, ինչպէս դեռ այժմ էլ շատ երկիրներում, մի գրութիւն, որ մնացել է այդ հին ժամանակներից: Վարելի հողերն էլ կրկին ընդհանուր սեփականութիւն էին. այդ հողերը փոփոխակի կերպով յայտնի տարի ժամանակամիջոցով բաժանւում էին գերզաստանների մէջ՝ համաձայն իւրաքանչիւրի ոյժերին ու պէտքերին: Այդպիսի տնտեսական պայման-

ների գրութեամբ ամենքն աշխատաւոր էին, ամենմէկն աշխատում էր իրան համար և ապրում էին կատարեալ համերաշխութեան ու հաւասարութեան մէջ, միմեանց օգնելով, ոչինչ պահանջ չունենալով միմեանցից: Տընտեսական համայնական պայմանները նրանց մէջ ըստեղծում էին մէկ այնպիսի հասարակական վիճակ, որ ընդհանուր բարօրութիւնն ապահովւած էր: Մասնաւոր սեփականատիրութիւնը դրանից յետոյ ամեն տեղ ստեղծեց այնպիսի ախտեր, ինչպէս գողութիւնը, աւագակութիւնը, կեղծաւորութիւնը, խաբերալութիւնը և այլն, որոնք բոլորովին անմասնօթ էին համայնական կարգերին: Համայնական սեփականութեան ժամանակ, նախնական դարերում, օրէնքների փոխանակ թաղաւորում էին սովորութիւններն, աւանդութիւնները, որոնք չէին կարող այլ կերպ լինել, և թէ՛ ո՛չ այնպէս, ինչպէս պահանջում էր տնտեսական համայնական պայմանների ոգին, այն է՝ համերաշխութեան, հաւասարութեան վրայ հիմնւած: Համայնական սեփականատիրութեան միջոցին, մարդկանց բարոյականն առհասարակ թեքւած էր դէպի առաքինութիւն, և նրանց թերութիւնները, — որոնք սակայն երբեք այնպէս խոչոր ու ապականւած չէին, ինչպէս այժմ են, — միշտ ենթարկւում էին ընդհանրութեան անհաւանութեան և պախարակման: Համայնական սեփականատիրութեան ժամանակ, գոյութեան համար մղւած պատերազմը բրնտեթեամբ դէմ կատարւում էր ընդհանուր կողմից միահամուռ կերպով: Այդօրինակ համայնական կարգեր տակաւին մինչև օրս էլ գոյութիւն ունեն, մնալով հին ժամանակներից, Ամերիկայի, Ասիայի և մինչև իսկ

Ռուսաստանի մի քանի տեղերը: Դրանք կենդանի ապացոյցներ ու արձաններ են մարդկութեան նախնական համայնական կարգերի և գիտնականին միջոց են տալիս իրական կերպով ու փաստերով քննել ու հետազոտել տեղն ու տեղը, թէ ինչ տեսակ հանրակեցութիւն են ունեցել մեր վաղեմի նախնիքները և թէ այնուհետեւ ինչ եղանակով և ինչ տեսակ կերպարանափոխութիւններ է կրել նա:

Բայց այդ հաւաքական, համայնական սեփականատիրութեան կերպերն ունէին հիմնական պահպաւթիւններ, և այլ կերպ չէր կարող լինել, քանի որ աշխատանքի միջոցներն ու գործիքները նախնական, անկատար էին: Այդ հիմնական պահպաւթիւններից գլխաւորը կայանում էր նրանում, որ հէնց աշխատանքի գործիքները ու միջոցների անկատարութիւնը գրաւում էր իւրաքանչիւրի ամբողջ ժամանակն աշխատութեան գործադրութեան վրայ, և այդպիսով միայն կարողանում էր իւրաքանչիւրը մի կերպ լրացնել իր պէտքերը, այն էլ անբաւական չափով: Եւ աշխատանքի վրայ իւրաքանչիւրի ամբողջ ժամանակի այդ գործադրութեան պատճառով հասարակութիւնն անխուսափելի կերպով պէտք է բաժանվէր այլ և այլ խաւերի, այլ և այլ դասակարգերի վրայ, և այդ բաժանման պատճառով հաւաքական կարգերը պէտք է սկսէին քայքայվել: Չանագան դասակարգերի երևան գալովը սկսում է առաջ գալ, մինչև այն ժամանակ չեղած, մէկ ուրիշ երևոյթ, այն է՝ արդիւնքների փոխանակութիւն: Փոխանակութիւնը սկսելով գոյութիւն ունենալ, կամայ կամայ կերպարանափոխվում է աշխատանքի նախ-

կին եղանակը, այն, որ տեղի ունէր հաւաքական, համայնական կարգերում: Նախ երևան է գալիս անձնական աշխատանքի սկզբունքը, որը իր ետեւից առաջացնում է մի հիմնական սլոյման — անձնական աշխատանքի գործիքները սկսում են պատկանել միևնոյն անձին: Այդպիսով աշխատանքի գործիքներն իւրացվում են: Այդտեղից առաջին անգամ սկսում է գոյութիւն ունենալ մասնաւոր սեփականութիւնը: Բայց այդ մասնաւոր սեփականատիրութիւնն ունենում է մի յատկանիշ, որ մինչև այժմ էլ գեռ ևս գոյութիւն ունի նահապետական երկիրներում, գեղջկական ու արհեստաւորական աշխատութիւնները մէջ: Դա այն յատկանիշն է, որով աշխատանքի արդիւնքն առաջնապէս յատկացվում է իրան աշխատաւորի անձնական գործածութեան համար, գործածութիւն, որ յայտնվում է աշխատանքի նպատակը: Նախնական հաւաքական կարգերի անկատարութեան ու թերութիւնների շնորհով, այդ կարգերը սկսած լինելով քայքայվել և առաջ բերելով վերոյիշեալ անձնական աշխատանքը, որի արտաբերած արդիւնքներն այլ ևս դառնում են մասնաւոր սեփականութիւն միևնոյն անձի, մի կողմից և հէնց այդ պատճառով՝ միւս կողմից՝ երևան գալով արդիւնքների փոխանակութեան եղանակը — դրանցից պէտք է առաջանար, ժամանակի ընթացքում, մրցում, կռիւ նախ անհատների և ապա ամբողջ դասակարգերի մէջ իրար դէմ: Այդ կուում, ի հարկէ, սկսում է տեղի ունենալ բիրտ ոյժը, բռնութիւնը, խարբերակութիւնը, և հասարակութեան մի մասն աջողում է դրաւել մէկ առանձնաշնորհված զիբը, միւս մասին գործադրել տալով

նակ այն բաժին աշխատանքը, որ իրան էր ընկնում առաջ, և ինքն սպրեւրով ուրիշի այդ աշխատանքով, ձեռքն առած գործերի կառավարութիւնը: Եւ այդպէս անտեսական նախնական, հաւաքական կարգերի քայքայման հետ միատեղ սկսում է տեղի ունենալ դասակարգերի կռիւը միմեանց մէջ, որ տեսւմ է մինչեւ օրս և որ ներկայումս ստացել է աւելի կատաղի ու անհաշտ կերպարանք, քան երբ և է անցեալում:

Արդիւնաբերութեան միջոցների առաւել կատարելագործութեամբ և աշխատանքի բաժանման շնորհով, ըստ որում աւելի զօրաւոր դասակարգերը դարձել էին մեծ սեփականատէրեր, ստաջացաւ գերութիւնը: Իր ժամանակին ղերութիւնն ինչպէս ինքնըստինքեան մէկ անխուսափելի, ճակատադրական հետեանք էր սեփականատիրութեան կերպիւրի և աշխատանքի բաժանման, նոյնպէս նաև անհրաժեշտ ու օգտակար դեր կատարեց մարդկութեան առաջադիմութեան համար: Գերութեան ժամանակները, հասարակութեան մէկ առաւել կամ նուազ մեծամասնութիւնը հարկադրված էր կատարել արդիւնաբերական ու հողային աշխատութիւնները, իսկ հասարակութեան միւս մասը սեփականատէր էր և իր ձեռքն էր գցել երկրի կառավարութեան ղեկը: Այդ պայմանը հասարակութեան այս վերջին մասին սալիս էր շատ ազատ ժամանակ, որը նա գործադրում էր զիտութեան ու արուեստների աշխատութեան ու մշակման վրայ, որով ևս իր կողմից հանդիսանում էր անհրաժեշտ նպաստող ու ֆակտոր առաջադիմութեան: Այդ միջոցին առանձնաշնորհված մասը

տակաւին կատարում էր իր պատմական օգտակար դերը:

Երբ համայնական դրութեան արտաբերութեան միջոցները հասան այն աստիճան զարգացման, որ իւրաքանչիւրը կարող էր այլ ևս արդիւնաբերել աւելի, քան իր անձնական պէտքն էր, անպատճառ պէտք է կազմվէր մէկ այնպիսի դասակարգ, որ, ինքը դադարելով աշխատանք գործադրելուց, կարող էր օգտվել ու ապրել աշխատաւոր դասակարգի արտաբերած արդիւնքներով: Այդպէս եղաւ նաև գերութեան հետ: Այս գերութիւնը սկսաւ կամաց — կամաց վերանալ այն ժամանակից, երբ միւս կողմից սկսել էին առաջ գալ աշխատանքի ուրիշ եղանակներ, որոնք աւելի համապատասխան էին հասարակութեան նիւթական պահանջներին: Ժամանակի ընթացքում նա վերացաւ բոլորովին, տեղի տալով անտեսական մի նոր միջավայրի և շրջանի, ուր փորձութիւնը, աւատական գրութիւնը, եղաւ կարգն ու կանոնը, ունենալով աշխատանքի իրան յատուկ կերպն ու եղանակը: Ճորտութեան ժամանակն իշխող, տիրապետող դասակարգըն էր աւատական ազնւականութիւնը, որը, ինչպէս գերութեան միջոցին իշխող զինւորական, ազնւական ու հոգևորական դասակարգերը, իր ժամանակին ունէր իր պատմական օգտակարութիւնը. նա զինճօրական ու կրթված դասակարգ էր կազմում, որ պաշտպանում էր զիւղացի-սեփականատէրին բազմաթիւ արտաքին թըշնամիներից և փոխարէնը ստանում էր նրա արտադրած արդիւնքներից յայտնի բաժին և յայտնի քանակութիւն աշխատանք: Որպէս գերութեան ժամանակի ազնւական

ու հոգեւորական իշխող դասակարգը, նոյնպէս աւստական աղնւականութիւնն իր սկզբնաւորութեան ժամանակ կատարելով այդ օգտակար դերերը, կառավարում էր նաև երկիրը, հասարակաց գործերը, աշխատանքը: Բայց արգելնաբերութեան միջոցների պարզացումով և դրա հիման վրայ հասարակական դրութեան կերպարանափոխութեամբ՝ այդ առանձնաշնորհված դասակարգերը կորցնում են իրանց օգտակարութիւնը, դառնում են վնասակար, քանի որ այդ հասարակական կերպարանափոխութիւնն այլ ևս աւելորդ է դարձնում նրանց գոյութիւնը: Տնտեսական յարաբերութիւնների նոր կերպերն այլ ևս անխուսափելի, ճակատագրական են դարձնում այդ դասակարգերի վերացումը, որոնք, մանաւանդ այդ միջոցին, սրպէս և առաջ առհասարակ, օգտակար իրանց առանձնաշնորհված դիրքից և իրանց ունեցած գիտութեամբ ու գինւորական-քաղաքական գորութեամբ, գործ են դնում աշխատաւոր բազմութեան վրայ ամեն տեսակ բռնութիւն, ճնշում, կամայականութիւն և այլն, իրանք էլ արդէն ծուլութիւնից ու անգործութիւնից վարակված լինելով ամեն տեսակ մոլութիւններով:

Աւստական դրութեան յաջորդում է ներկայ հասարակական կազմակերպութիւնը, որ արդիւնք է արտաբերութեան այժմեան, կապիտալական կերպերի օճանակների և որը, նախկին գերութիւնից, միջնադարեան ճորտութիւնից յետոյ առաջացել է մի նոր ստրկական վիճակ. այն է վարձուրութիւնը (salarjat): Այդ բուրժուական հասարակական կազմակերպութիւնը և հնադարեան ու աւստական աղնւա-

կանների պէս շարգելնաբերող, միայն վայելող ուրիշի աշխատանքը և սեփականատէր բուրժուա դասակարգն էլ վերանալու վրայ է այսօր, կատարած ու աւարտած լինելով իր պատմական օգտակար դերը և այժմ հանդիսանալով միայն վնասակար աշխատաւոր ընդհանրութեան և արդէլք ընդհանուր մարդկութեան յետագայ առաջադիմութեան:

I I I .

Մարդկային հասարակութեան ընդհանուր կենցաղի բուրժուագական դրութիւնն առաջացրեց պատմական մի նոր հոսանք, որի արտայայտիչները հանգիսացան գիտութեան վերջին խօսքի, գիտական սօցիալիզմի հայր, աշխարհահռչակ գիտնական Կարլ Մարքսը, որի անունով էլ անւանում են գիտական սօցիալիզմը մարքսիզմ, և այս՝ նոյնքան հռչակաւոր գիտնական՝ առաջինի աշխատակից — Ֆրիդրիխ Էնգելս:

Ինչո՞ւմն է կայանում Մարքսի պատմական-փիլիսոփայական թէօրիան, որ այսօր գիտական է համարվում ո՛չ միայն մարքսիստների կողմից, այլ և մի շարք անկախ գիտնականների հետազօտութիւններով: Այդ թէօրիայի համաձայն արդէն նախորդ գլխում մենք ներկայացրինք մարդկային հասարակութեան զարգացման ընթացքը մինչև բուրժուագական դրութիւնը. ամփոփենք մեր ասածները և կանդ առնենք մասնաւորապէս այդ վերջին ու դրան յաջորդող գրութիւնների վրայ:

Մարքսն ապացուցանում է, որ հասարակական ամեն կազմակերպութիւն իբրև հիմք իրան՝ ունի ար-

դիւնաբերութեան յայտնի ձևեր ու կերպեր: Այդ կերպերի իմաստի ու յատկութիւնների համաձայն եմ կազմվում հասարակական յայտնի յարաբերութիւններ, նիստ ու կաց և աշխարհահայեացք: Հասարակական յայտնի ձևի կազմակերպութեան բնական զարգացումն առաջ ընթանալով, դալիս հասնում է ժամանակով մի յայտնի բարձր աստիճանի, երբ նոյն իսկ իր, այդ յայտնի կազմակերպութեան, միջից ծագած, նրա արբանդից ծնունդ առած արդիւնաբերական, նիւթական ևնր պայմաններն առաջացնում են ևնր հասարակական կազմակերպութեան պահանջ, հասարակական ևնր յարաբերութիւններ և այլն: Այդպիսով արդիւնաբերական կերպերի ու յատկութիւնների և դրանց բնական զարգացման համաձայն կատարվում է մարդկութեան կենսական ու քաղաքական յարաբերութիւնների և բնդհանուր աշխարհահայեացքի բնական զարգացումը: Եւ Մարքսն ասացուցանում է, որ աւատական հասարակական կազմակերպութիւնից ճակատադրական, անխուսափելի կերպով առաջ եկաւ կապիտալիստականը և այս վերջինից նոյնպիսի ճակատադրական կերպով կառուցանայ սոցիալիստականը: Մարքսի այդ թէօրիան կոչվում է տնտեսական-մատերիալիզմ:

Այդ թէօրիան ներս է բերում դիտութեան մէջ մի բոլորովին նոր հայեացք՝ պատմութեան վրայ, այն է մատերիալիստական: Այդ հայեացքը դիտականապէս հաստատում է, որ համաշխարհային պատմութիւնն ուրիշ ոչինչ է, եթէ ոչ զասակարգերի կռիւ, և լուսարանում է մարդկութեան անցեալն ու ներկան և այս վերջինի մէջ գոյութիւն ունեցող արդիւնաբերական

ու փոխանակութեան կերպերի բնական կերպով կատարվող զարգացման, էվոլյուցիայի համեմատ որոշում է, թէ որպիսի ապագայ է պատրաստվում: Մինչև այդ հայեացքի երևան գալն առհասարակ ընդունված էր նախկ պատմութեան վրայ կամ պատերազմների, ընդհարումների, յեղափոխութիւնների, կրօնական պառակտումների մի երկար շարք, կամ մի յայտնի դադարի զարգացման ընդհանուր գիծ, կամ դանազան աշխարհահայեացքների յաջորդական փոփոխութիւն, կամ սովորութիւնների, բարքերի, իրաւական յարաբերութիւնների և այլն կերպարանափոխութիւն: Մարքսը հաստատեց, որ պատմութեան ընթացքը զարգանում ու առաջանում է իր ներքին բնական օրէնքների համեմատ, օրէնքներ, որ ստեղծվում են, ինչպէս վերև ասացինք, արդիւնաբերական կերպերի ու ձևերի շնորհով:

Ինչպէ՞ս է ներկայացնում ու հաստատում Մարքսը ներկայ կապիտալիստական կազմակերպութեան փոխվելը դէպի սոցիալիստականը: Արդիւնաբերութեան աւատական կերպերի մէջ ծագելով իրանց սեփական, ներքին, իրանց մէջ գոյութիւն ունեցած ճակատութիւնները, առաջացրին աւատական կարգերի անկումը և ծնունդ առին նրանցից կապիտալիստական կարգերը: Սրանք, զարգանալով, առաջ բերին ամենախոշոր արդիւնաբերութեան ձևը, ստեղծեցին խոշոր արհեստանոցներն ու գործարանները, ուր գլխաւոր բանող ոյժը մեքենան է: Իրանցից տեղի ունեցաւ աշխատանքի ամենախիտ բաժանում, որը մի տեսակ առարկայ արդիւնաբերելու համար մէկ ամբողջ շարք բանւորներ

իրար հետ կապեց, գործարանական յարկերի տակ էլ ժողովեցան աւելի ու աւելի մեծ քանակութեամբ մարդիկ, և այդպիսով ստեղծվեցաւ նրանց մէջ նիւթական դրութեան ու շահերի միանմանութիւն, հետեւաբար և համերաշխութիւն: Իսկ միւս կողմից աշխատանքն էլ ընդունեց համաշխական, հաւաքական (collectif) ձեւ, և այդպիսով ստեղծվեց մի հակասութիւն մինչդեռ սեփականութիւնը կրում է անհատական ձեւը, պատկանում է մէկ անհատի, աշխատանքի ձեւը, ընդհակառակը, հաւաքական է յայտնվում: նոյնպէս — մինչդեռ աշխատանքը հաւաքական է, նրա արդիւնքըն, ընդհակառակը, իւրացվում է անհատի ձեռքով, որը շահագործում է այդ մարդկային ոյժը, աշխատանքը: Բայց կապիտալիստական արդիւնաբերութիւնը, կապիտալների աւելի ու աւելի կուտակման պատճառով և աշխատանքի տեսնելիական միջոցների, մեքենաների աւելի ու աւելի պարզացման շնորհով՝ ժամանակի ընթացքում ընդունում է աւելի ու աւելի խոշոր կերպարանք, գործարաններն ու արհեստանոցները շարունակ ընդարձակվում են իրանց չափով և նրանց մէջ աշխատող բանւորների թիւն էլ աճում է, աւելի խոշոր կապիտալիստը մրցման մէջ հարուածում է աւելի մանր կապիտալիստին և սրան քայքայելով, իւրացնում է սրա սեփականութիւնն էլ: Սեփականութիւնն այդպիսով անցնում է աւելի ու աւելի քիչ քանակութիւն կազմող անհատների ձեռք, մինչդեռ միւս կողմից, ընդհակառակն, անընդատ կարգով աճում ու բազմապատկվում է ամեն սեփականութիւնից գուրկ մտրդկանց թիւը, որոնք էլ դառնում են օրավարձ

բանւոր և հանդիսանում պրօլէտարի: Այդպէս, բանւոր ընդհանրութեան թիւը շարունակ մեծանում է և նրա աշխատանքն աւելի մեծ ուժգնութիւն (intensité) ստանում, իսկ կապիտալիստներն, ընդհակառակը, թուով աւելի ու աւելի են պակասում և բոլորովին օտար յայտնվում աշխատանքի գործադրութեան մէջ: Կայ թէ չը կայ կապիտալիստ, աշխատանքն իր կարգովը կարող է աւելի ու շարունակվել և արդիւնաբերել: Այդ բոլից կապիտալիստն այլ ևս ոչ մի դեր չէ խաղում արդիւնաբերութեան գործողութեան ու գործադրութեան մէջ: Նոյն իր ձեռքով առաջացած խոշոր արդիւնաբերութեան կերպերն իրանց նկատմամբ նրան դարձնում են այլ ևս աւելորդ: Այսպէս, արդիւնաբերութիւնն արդէն ընդունելով հաւաքական ձև, վերջնականապէս դուրս է վռնտում կապիտալիստին իր միջից, դարձնում նրան բանւորների աշխատանքի շահագործող օտարակեր (պարագիտ), իսկ աշխատանքի ու արդիւնաբերութեան գործադրութեան և ոյժի տէրեր դարձնում բանւորներին: Այդտեղից էլ առաջանում է այն դրութիւնը, թէ, ուրեմն, սեփականութիւնը պէտք է պատկանէ ընդհանրութեան և ամենքին, ամենքն էլ աշխատաւոր լինելու պայմանով: Կապիտալիստական արդիւնաբերութիւնը պէտք ունի աղատ ձեռքերի, որոնք բանւոր լինեն, որոնք կազմեն բանւոր ընդհանրութիւնը, որը գտնվէ կապիտալիստի տրամադրութեան տակ օրավարձի գնով: Այդ արդիւնաբերութեան եղանակներն այն երևոյթն առաջացրին, որ գեղջկական, մանր արհեստաւորական բազմութեանը գրկեցին ամեն սեփականութիւնից և նետեցին նրան շուկան,

որ անուհեան նա միայն մի սեփականութիւն ունէր իր պարուտը հայթայթելու համար. դա — նրա Ֆիզիքական ոյժն էր, որ և յայտնի օրալարձով ծախում էր դործատուին: Ժամանակի ընթացքում, ինչպէս վերե տեսանք, նոյն իրան կապիտալական արդիւնաբերութեան նիւթական պայմանների շնորհով, այդ բանւորները համախմբվում են, կազմելով առանձին դասակարգ, պրօլետարական դասակարգ: Գոտակարգային կոիւն ալ ևս տեղափոխվել է նոր հողի վրայ՝ պրօլետարիատի և կապիտալիստ դասակարգի մէջ: Բայց մենք արդէն տեսանք, որ արդիւնաբերութեան կերպերն էլ ընդունում են աւելի ու աւելի հաւաքական-սօցիալիստական կերպարանք և այդպիսով դրանց ընթացքն էլ հակառակում է կապիտալիստ դասակարգին: Ահա հէնց այդ նիւթական պայմանները դարգացնում են պրօլետարիատի մէջ իր դասակարգային գիտակցութիւնն ու ինքնագործունէութիւնը և պատրաստում են նրան մի նոր հասարակական կացութեան համար:

Այդպիսով սօցիալիստական, հաւաքական կերպով կազմակերպութիւնն ինքն ծնունդ է առնում ներկայ կապիտալական կազմակերպութեան նիւթական պայմաններից և բնական կերպով առաջ դալիս իր բնատուրութեամբ ներկայ հասարակական դրութեան: Եւ սօցիալիստական կազմակերպութեան մէջ էլ արդէն ինքն ըստ ինքեան չքանում է դասակարգային կոիւր, որովհետեւ չքացած կը լինի ամեն դասակարգ, և միջոց է տալիս ընդհանուր մարդկութեան կատարեալ ազատութեան, բարեկեցութեան՝ համերաշխութեան ու հաւասարութեան սկզբունքների վրայ, սկզբունքներ,

որոնք առաջացել են և գործադրութիւն կը ստանան ուղղակի արդիւնաբերական, նիւթական յայտնի պայմանների ու յարաբերութիւնների շնորհով:

I V .

Այսպէս, մի ժողովրդի մէջ կեանքի հասարակական-բողոքական պայմանների փոփոխութեան պահանջ ծագում է միայն այն ժամանակ, երբ նրա կեանքի տնտեսական պայմաններում սկսում է առաջանալ օրգանական, ներքին փոփոխութիւն: Տնտեսական, նիւթական պայմանները միշտ պահանջում են իրանց իմաստի համապատասխան քաղաքական-հասարակական պայմաններ, կառուցվածք: Երբ այս վերջիններն ալ ևս յատնվում են արդեւք, խոչնդոտ տնտեսական նոր, ծագող պայմանների բնական ընթացքի, բնական դարգացման համար, անխուսափելի կերպով նրանք պէտք է ընկնեն, պէտք է վերանան:

Տնտեսական այդպիսի մի ներքին կերպարանափոխութիւն կատարվում է այժմ ընդհանուր հայութեան մէջ: Ամբողջ հայութիւնն, իր տնտեսական պայմաններով, ներկայումս գտնվում է այդպիսի պատմական բուրգում, երբ այդ պայմաններն աւելի ու աւելի քայքայվում են և տեղի տալիս նոր պայմանների: Գիւղական մանր սեփականատիրութիւնն ու տնտեսութիւնը՝ գնալով՝ աւելի ու աւելի կորցնում են իրանց նախկին մեծ ծաւալից: Խրված անվճարելի պարտքերի մէջ, ծանրաբեռնված հարկերով, որոնց սխտէմը (կրոնական) միանգամայն աւերիչ է և հարուած հարուածի վրայ է հասցնում գելզական արդիւնաբերութեան, ա-

ւելի ու աւելի սահմանափակելով զիւզացու ձեռքով մշակված հողի ծաւալն ու նուազեցնելով, օր. թիւրքաց Հայաստանում, արդիւնաբերութեան քանակութիւնը, հարկերի հատուցումը լինելով դրամապէս, մինչդեռ դրամի խիստ պակասութիւն միւս կողմից, — այդ պայմաններում հողն իրապէս դարձել է գիւղացու համար ոչ միայն ծանր բեռ, որ չէ տալիս ոչ մի շահ, այլ և մի շարքա ստիկ գործիք, որ ծառայում է միայն շահագործողներին — կառավարութեան, կալուածատէրերին, վաշխառուներին, պաշտօնեաներին: Եւ այդ հողն աւելի ու աւելի ընկնում է գիւղացու ձեռքից, անցնելով կամ վաշխառու, վաճառական, ունեւոր, կալուածատէր դասակարգի ձեռքը և կամ ընկած անմշակ: Գիւղացիներն էլ շարունակ թողնում են իրանց հօրենական արհեստը, թողնում հողը և պանդխտում գէպի արդիւնաբերական քաղաքները, որտեղ նրանք ուրիշ գործ չեն կարող անել, եթէ ոչ միայն գտնել գործ օրավարձով: Նրանք դառնում են այդպիսով վարձու բանուորներ: Ճիշտ է, որ այդպիսիներից շատերը տագաւին չեն կորցրած իրանց հողը, որ ժամանակի ընթացքում է միայն կամաց-կամաց ընկնում վաշխառուի, կալուածատէրի, վաճառականի ձեռքը պարտքի փոխարէն, բայց դա միայն ժամանակի խնդիր է: Բացի այդ, ճիշտ է, սակայն, որ կան, ընդհակառակն, ամբողջ դաւառներ էլ, ուր գիւղացիների մէջ զգացվում է հողի խիստ պակասութիւն և կամ ուր գիւղացին սեփական հող չունի խակապէս, այլ աշխատաւոր է կալուածատէրերի մօտ: Իրողութիւնն այն է, որ գիւղացիներեց շատերն արդէն կորցրել են իրանց

հողը, ուրիշները կորցնելու վրայ են, մինչդեռ դժբանց հաշիւն վաստակում են գիւղացի դասի բարեկեցիկ փոքրամասնութիւնը և ունեւոր դասակարգը: Այդ ամբողջ պրօցէսը (դարգացման ընթացքը) պատմականօրէն անխուսափելի է, իբրև հետեանք՝ մի կողմից հայութեան մէջ մուտք գործող արդիւնաբերական աւելի կատարելագործված միջոցների, որ գտնվում են ունեւոր դասակարգի ձեռքը, և միւս կողմից, կառավարութեան այն հարկային ու ֆինանսական սխտէմի, որ տիրապետում է երկրում: Այդպիսով գիւղացի դասի մի մասը, միշտ աւելի ու աւելի աճող քանակութեամբ, ըստիպված է լինում իր ապրուստը հայթայթելու համար, իր պարտքերը վճարելու յուսով, պանդխտել արդիւնաբերական քաղաքներ ու երկիրներ և շարունակ բազմացնել վարձու բանուորներ, պրօլէտարիատի թիւը, որ արդէն ուղղակի կերպով գտնվում են գործարանատէրերի, կալուածատէրերի և առ հասարակ ունեւոր դասակարգի անմիջական ու խիստ շահագործութեան տակ: Այդպիսով հայութեան մէջ առաջանում է մի նոր դասակարգ, որ այսօր գտնվելով իր սկզբնաւորութեան մէջ, ժամանակի ընթացքում, առևտրականութեան ու արդիւնաբերութեան աւելի դարգացման շնորհով մեր մէջ, երևան կը զայ իբրև արդէն լիովին կազմված մի դասակարգ, բանւոր, պրօլէտարիատ դասակարգ, որ իր տնտեսական շահերով կատարելապէս հակառակ է ունեւոր դասակարգին: Միւս կողմից նոյն շաւիղի վրայ է նաև արհեստաւոր դասը, որ եւրոպական ու ներքին արդիւնաբերութեան մեքենական սխտէմի դէմ մրցել անկարող լինելով, այժմ արդէն քայ-

քայվում է և շարունակ աւելի քայքայվելով, նոյնպէս անցնում է պրօլէտարիատի շարքը: Արդիւնաբերական քաղաքներում արդէն հիմա էլ տասնեակ հազարների են հասնում հայ վարձու բանւորների թիւը:

Ժողովրդի ստորին խաւերի տնտեսական պայմանները պատճառ լինելով նոյն այդ խաւերի շարունակ քայքայման և կամաց-կամաց նրանցից կազմելով մի նոր դասակարգ՝ մի կողմից, միւս կողմից, ընդհակառակը, նպաստում են մէկ ուրիշ դասակարգի կազմութեան եւս, դասակարգ խոշոր վաճառականների, կալուածատէրերի, գործարանատէրերի, բանկատէրերի, մի խօսքով, բուրժուազիայի: Եւ մինչդեռ դիւզապի դասը շարունակ քայքայվում ու աւելում է, ունեւոր դասակարգն, ընդհակառակը, անդադար զօրանում է նոյն այն առաջին դասի հաշիւն, և, թէև համեստ շրջանակում, որքան այդ թոյլ են տալիս տիրապետող տէրութիւնների միապետական կարգերը, աւելի ու աւելի է ձեռք բերում յայտնի առանձնաշնորհումներ, արածնութիւններ, լինի դա թիւրքիայում, լինի Ռուսաստանում-կովկասում: Այդ նոր զօրացող դասակարգն անդադար աւելի ու աւելի է գատվում Ժողովրդի ստորին խաւերից, ընդունում է աւելի որոշ կերպարանք, ներկայնում է հասարակութեան մէկ ինքնուրոյն մասը, որ իր տնտեսական շահերով ուղղակի հակառակ է Ժողովրդային ընդհանրութեան առհասարակ և բանւոր դասակարգին մասնաւորապէս: Շահագործել, շահագործել աւելի ու աւելի խիստ կերպով Ժողովրդային աշխատաւոր ընդհանրութեանը — ներքին իմաստը, ձգտումն ու տէնդէնցիան է բուրժուա,

ունեւոր դասակարգի: Արդիւնաբերութեան միջոցները, որ աւելի ու աւելի են անցնում նրա ձեռքը, աշխատաւոր ընդհանրութեան ենթարկում են այդ շահագործութեան և տեղի տալիս խիստ հակառակութեան այդ երկու դասակարգերի մէջ: Որքան աւելի զարգանայ մեր մէջ արդիւնաբերութիւնը, որքան նա ընդունէ խոշոր կերպարանք — գործարանական ու կալուածատիրական, — նոյնքան աւելի կը վերանայ դիւզապի մանր սեփականութիւնը, աւելի տեղ տալով խոշոր սեփականատիրութեան, նոյնքան աւելի կը քայքայվէ արհեստաւոր դասն իր փոքրիկ արհեստանոցով, ուր ինքն աշխատաւոր է, աւելի ու աւելի տեղ տալով գործարանին: Գործարան ու խոշոր սեփականատիրութիւն, մի խօսքով, խոշոր արդիւնաբերութիւն ասել, նշանակում է ասել մեքենայագործ արդիւնաբերութիւն: Իսկ արդիւնաբերութեան այդ գործիքները — մեքենայ, ընդարձակ հող, գործարան — ունենալու համար պահանջվում է նիւթական մեծ ոյժ, կապիտալ, որ դրանով է միայն ունեւոր դասակարգի ձեռքը, մէկ ոյժ՝ զոյացած բանւորների շահագործելուց: Ուրեմն խոշոր արդիւնաբերութեան զարգացումն առաջացնում է կապիտալիստ դասակարգի աւելի զօրացում ու զարգացում, իսկ այս վերջինի աւելի զարգացումը, հետեւաբար, պէտք է զարգացնէ պրօլէտարիատի թիւը, դիւզապի ու արհեստաւոր դասերին ջախջախելով իր նիւթական աւելի մեծ զօրութեամբ, շահագործելով նրանց և միւս կողմից իր գործարանների մէջ, իր հոգերի վրայ վարձու բանւորների աշխատանքի պէտք ունենալու պատճառով:

Դա է այն պատմական բնական պրօցէսը, որ սկսել է տեղի ունենալ հայութեան մէջ և որի առաջադիմական ընթացքն անխուսափելի է և միեւնոյն ժամանակ ինքն էլ պայման հայութեան ընդհանուր առաջադիմութեան: Հայութեան մէջ ծագող տնտեսական այդ նոր յարաբերութիւններն իրանց շարունակ զարգացումով՝ ազգն աւելի ու աւելի կը դատեն երկու մասի, երկու դասակարգի վրայ, կապիտալիստ ու պրօլէտարիատ, որոնք հէնց այժմ, իրանց կաղմութեան ներկայ ըսկըղնաւորութեան մէջ, ունեն միմեանց հակառակ տնտեսական շահեր, որ՝ զնայով՝ աւելի ու աւելի կը որոշվեն և վերջը կառնեն արդէն սուր կերպարանք:

Կայ սակայն մի քաղաքական պահանջ, որ ընդհանուր է հայ ունեւոր դասակարգին և ժողովրդային ընդհանրութեան շահերի համար: Այդ պահանջն է միապետական կարգերի ոչնչացումը, որոնք իրանց կառավարչական, հարկային ու ֆինանսական սխտէմներով (ձեւերով) վերոյիշած երկու դասերի զարգացման ու շահերի համար էլ արդէլք են, աւերիչ են, փնասակար են և իրանց էութեամբ անհամապատասխան են հայութեան մէջ ծագող տնտեսական նոր յարաբերութիւններին: Սրանք այլ ևս պահանջում են հասարակական-քաղաքական նոր, բոլորովին տարբեր կարգեր՝ համաձայն այդ նոր յարաբերութիւնների էութեան, ներքին արամբանութեան: Ահա հէնց այդ նոր յարաբերութիւններն են, որ պատմական բեմի վրայ են հանել մի հայկական դատ, որը հայութեան տնտեսական և դրա զօրութեամբ, սրեմն, նաև քաղաքական-հասարակական ընդհանուր առաջադիմութեան ու զարգացման

դատ է: Այդ դատն այսօր լուծման մի միակ ճանապարհ ունի. հայութիւնը պէտք է ձեռք բերէ քաղաքական ազատութիւններ, կառավարական սահմանադրական կարգեր, իբրև անհրաժեշտ միջոց, որ տնտեսական ծագող կերպերն են պահանջում իրանց զարգացման համար: Հայկական դատն այսօր յեղափոխական գործ է առաջացրել հայութեան մէջ, և այդ յեղափոխութիւնը քաղաքական է, այսինքն նրա անմիջական նպատակն ու հետեանքն է՝ յեղափոխել հայութեան վրայ տիրապետող քաղաքական կարգերը:

Հայութեան ներկայ տնտեսական իրականութեան միջոցին և պատմական այդպիսի բոլորում, ինչո՞ւմն է կախնում այն Հայերի, այսինքն սօցիալիստ-ռամկավարականների, մարքսիստների, գործունէութիւնն ու գերը, որոնք առաջնորդվում են միմիայն ժողովրդային աշխատուէր ընդհանրութեան շահերով, որոնք պաշտպան են այդ ընդհանրութեան տնտեսական, քաղաքական ու սօցիալական պատմական ձգտումներին: Հայ սօցիալիստները պէտք է ձգտեն ձեռք բերել ընդարձակ քաղաքական ազատութիւններ, սահմանադրական ռամկավարական կարգեր, որոնք են միայն համաձայն ժողովրդային ընդհանրութեան ներկայ շահերին, ինտէլէկտներին և ո՛չ թէ այնպիսի ահամանադրական դրութիւն, որ ի վերջոյ դառնայ միմիայն այլ և այլ քաղական, տնտեսական առանձնաչնորձների ու արտօնութիւնների կարգեր՝ յօգուտ հայութեան միայն ունեւոր ու վարիչ դասակարգերի: Ժողովրդային ընդհանրութիւնը պէտք է ձգտէ ձեռք բերել իրան համար քաղաքական ընդարձակ իրաւունքներ, որոնք ա-

մեն մի հայ շախմատ քաղաքացուն միջոց տան ուղղակի կերպով լինելու ընտրող ու ընտրելի կառավարական մարմիններում և Օրէնսովի ժողովում (Ազգային ընդհանուր ժողովում), որպէս զի ժողովրդային աշխատաւոր ընդհանրութիւնը կարողանայ ուղարկել իր ներկայացուցիչներին: Ուրեմն, Օրէնսովի ժողովը պէտք է լինի հանրաժողովրդային: Բնդիւսմուք և ուղղակի ընտրութեան իրաւունք, որից էլ կախված են մամուլի, խղճի, խօսքի, գումարման, ընկերութիւնների և այլ քաղաքական ազատութիւններ — ահա թէ որոնք պէտք է յինեն այսօր մեր քաղաքական ամենագլխաւոր պահանջները՝ համաձայն ժողովրդային արդիւնաբերող ընդհանրութեան քաղաքական շահերին:

Ունենալով այդպիսի քաղաքական անմիջական պահանջներ, որ պահանջներն են ժողովրդային արդիւնաբերող բղձանրութեան շահերի, ի՞նչ աշխատութիւններով պէտք է ձգտէ հայ սօցիալիստը նրանց իրագործման: Մենք գիտենք այդերի պատմութիւնից, որ ամեն-մի յեղափոխական պատմական ընդունում ժողովրդային արդիւնաբերող ընդհանրութիւնն է, նա՛ է, աշխատաւոր ժողովուրդն է յեղափոխութեան անհրաժեշտ ու ամենաառաջնակարգ ոյժը, որ թափել է իր արիւնը, մոռացել է իր անձը, նահատակվել է պատերազմներում և իր հօր բազուկով այդերի համար բացել ճանապարհ դէպի առաջադիմութիւն, դէպի գարգացում, դէպի ազատութիւն: Բայց սակայն իրան բաժին միշտ հասել է թշուառութիւն. տիրապետել է նրան օտարը, տիրապետել է նրան իր «հարազատ» թաղաւորը, իր ազգի ազնուականութիւնը, տիրապետել են

նրան ունեւոր ու վարիչ դասակարգերը — միշտ նա ինքը եղել է այդ ամենի կաթնատու կովը և այն դէնքը, որ այդ տիրապետող դասակարգերը գործածել են իրար դէմ մղած կռիւներում: Երբեք չէ եղել օրինակ, որ յեղափոխութիւն անողն ու յաղթանակողը չը լինի աշխատաւոր ժողովուրդը, բայց նրա այդ ընթացքից օգտվողը գրեթէ միշտ եղել են ուրիշ դասակարգեր: Ներկայ պատմական ընթացքում արթնանաբերող ժողովրդի դէթ ամենաընդունակ մասը կարող է և պէտք է դիտակ լինի իր շահերին, իր օգտին, իր պատմական դերին, մի դեր, որ առաջացած է պատմականապէս, որը յեղափոխելով ներկայ կարգերը՝ պէտք է բանայ ճանապարհ մարդկութեան հետադայ գարգացման համար: Ի՞նչ կարող ենք եզրակացնել դրանից: Հետեւաւր — որքան ներում են հանգամանքները տալ արդիւնաբերող ժողովրդի ձեռքն այնպիսի դէնք, որ նպատաւոր է նրա շահերին: Ներկայումս այդ դէնքն է, որ հայ սօցիալիստը պէտք է տայ հայ ժողովրդային աշխատաւոր ընդհանրութեան: Բացատրել աշխատաւոր ընդհանրութեանն իր պատմական դերը, իր սօցիալական-քաղաքական խնդիրներն ու շահերը, գարգացնել նրա դասակարգային դիտակցութիւնը, լուսաբանել ու որոշել նրան իր քաղաքական իւրաքանչիւր պահանջը և այդպիսով դարձնել կողմնակից նրան իր շահերի համապատասխան յեղափոխութեան, պատրաստել նրա այդ անելիք յեղափոխութիւնը, և պրօպագանդայի ու ագիտացիայի հետ միաժամանակ՝ համախմբել ու կազմակերպել նրա ոյժերը մէկ ընդհանուր ու ամբողջական կազմակերպութեան մէջ, տալ

նրան միջոցներ ընդհանուր ապստամբութեան համար—
ահա հայ սօցիալիստ-ոսմկավարականի, հայ յեղափո-
խականի բռնելիք ընթացքն ու աշխատութիւնները:

Այդ ընթացքով ժողովրդային աշխատաւոր ընդ-
հանրութեան ճշմարիտ պաշտպանները, նրա պատմա-
կան ձգտումների արտայայտիչները, հայ սօցիալիստ-
ոսմկավարականները մի կողմից պատրաստելով նրան
ընդհանուր ապստամբութեան համար՝ յանուն քաղա-
քական ոսմկավարական սահմանադրութեան, միւս
կողմից կը կատարեն մի բուն սօցիալիստական գործ-
հայ բանւորներէից, այդպիսով, նրանք պատրաստում
են, կազմակերպում են «ապագայի զիմադրական կու-
սակցութիւնը», որին՝ ձեռք բերած ոսմկավարական
սահմանադրական պայմանները «կը ծառայեն իբրև
գործիք» մղելու համար՝ միասպետական կարգերի ան-
կումից անմիջապէս յետոյ՝ իր դասակարգային կռիւը
չարհերով իրան հակառակ իշխող դասակարգերի դէմ
ու ձախ սօցիալիստական կազմակերպութեան հաստա-
տութեան:

Բ Ա Տ Ի Ն Բ .

ԴԱՐՁԵԱԼ ՄՕՏԱԿԱՅ ՆՊԱՏԱԿ.— ԴԱՐՁԵԱԼ ՔԱՂԱ-
ՔԱՑՈՒ ԵՒ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՄԱ-
ՍԻՆ.— ՅԵՂԱՓՈՒՅՈՒԹԻՒՆ.— ԱՇԽԱ-
ՏԱԻՈՐ ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆ.—
ՅԵՂԱՓՈՒՅՈՒՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ.

I .

Առհասարակ, երեք բնակարանային լծի տակ գլու-
նվող ընդհանուր հայութեան մէջ տեղի ունենալով
տնտեսական, արդիւնաբերական մանր ձեւերի ներքին
կերպարանափոխութիւն զէպի խոչոք ձեւի արդիւնա-
բերութիւնը, նա բնական պահանջ ունի վերացնելու
այն բոլոր քաղաքական պայմանները, որոնք ներկա-
յումս իրանց պայութեամբ արդելք են հանդիսանում
այդ կերպարանափոխութեան պրօցէսին ու տնտեսական
զարգացման: Դա՛ մի կողմից: Միւս կողմից ծագում
է նոյնչափ բնական պահանջ այնպիսի նոր քաղաքական
պայմաններէ՝ հաստատման, որոնք, արդիւնաբերու-
թեան այդ նոր մուտք գործող կերպերին, միջոցներ
տան ազատաբար աճելու ու զարգանալու: Այստեղից
այն հետեւութիւնը թէ՛ երբ մի երկրում մուտք են գոր-
ծում արդիւնաբերութեան՝ նախկիններից տարբեր
կերպեր, ձեւեր, այդ երկրի քաղաքական պայմաններն
էլ պէտք է փոխվեն և վերակազմվեն արդիւնաբերու-
թեան այդ նոր, այդ մուտք գործող կերպերի համա-
պատասխան քաղաքական պայմանների վրայ, որոնք

էլ իրանց կողմից նոյնպէս տարբեր են նախկին քաղաքական պայմաններէց: Այսպէս, արդիւնաբերութեան ձեւերի կերպարանափոխութեանն անխուսափելի, ճակատադրական կերպով պէտք է յաջորդէ քաղաքական, հասարակական ու իրաւական կացութեան ընդհանուր կերպրանափոխութիւն:

Այս կամ այն ազգի կուլտուրական դարգացման, քաղաքակրթութեան աստիճանը որոշելու համար պէտք է նայել, թէ այդ ազգի մէջ արդիւնաբերութեան ինչպիսի կերպեր են տիրապետում և ո՛րչափ ընդարձակ է այդ կերպերի ծաւալը: Այն ազգերը, որոնց մէջ գոյութիւն ունի խոշոր արդիւնագործութիւնը, այսինքն հաւաքական, մեքենագործ, գործարանական արդիւնագործութիւնը, հանդիսանում են իբրև կուլտուրայէս աւելի դարգացած, կանգնած են քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանի վրայ, ինչպէս օրինակ Անգլիան, Պրանսիան և այլն, քան այն ազգերը, որոնց մէջ արդիւնաբերութեան տիրապետող կերպերը մնան են, ինչպէս օրինակ հայ ժողովուրդը: Այն դէպքում, երբ այս կամ այն ազգի մէջ մանր արդիւնագործութեան կերպերը այլ ևս անկարող լինելով բաւարարութիւն տալ հասարակութեան փոխված ու աւելի աճող ամեն տեսակ կենսական պահանջներին ու պէտքերին, սկսում են կամաց-կամաց քայքայվել, վերանալ, այն ժամանակ բնական կերպով սկսում են առաջ գալ ու դարգանալ այդ ազգի մէջ արդիւնագործութեան տարբեր, խոշոր կերպեր՝ աւելի գոհացնող հասարակութեան պէտքերը: Եւ կամ թէ այն դէպքում, երբ մէկ ազգի խոշոր արդիւնագործութեան արդիւնքները,

աւելի կատարելագործված, աւելի առատ ու աւելի աճան, սկսւմ են մուտք գործել ու վաճառանոց բանալ մէկ ուրիշ ազգի մէջ, որը դեռ դանդաւ է մանր արդիւնագործութեան շրջանում, այս վերջինը չէ կարողանում գլխանալ առաջինի մրցման, նա դատապարտվում է քայքայման, և մրցել կարողանալու համար նա ճգնում է իր մէջ էլ առաջացնել ու դարգացնել համանման գէնք՝ խոշոր արդիւնագործութեան կերպեր: Նա օտար խոշոր արդիւնագործութեան ազդեցութեան տակ՝ ինքն էլ իւրացնում է մի և նայն՝ խոշոր արդիւնաբերութեան՝ կերպերը: Այդ երկու դէպքումն էլ այն կերպերը քանքայման վրայ են և սկսում է նրա մէջ մուտք գործել խոշոր արդիւնագործութիւնը, կամաց-կամաց իր միջից առաջացնում է երկու որոշ դասակարգ, երկու տարբեր և իրար հակառակ հասարական-նիւթական շահ ու հոսանք: Մի դասակարգն այն է լինում, որ աջողում է աճել դառնալ նիւթական ոյժի, միւսն այն, որ ընդհակառակն իր ունեցած փոքրիկ կտոր հողն էլ կամ արհեստանոցն էլ չէ կարողանում ընդարձակել ու նորաձեւ արդիւնաբերութեան պայմաններում դնել, այլ կորցնում է նրանց, կորցնում է իր այդ փոքրիկ ուժերն էլ: Այդտեղ գոյանում են բուրժուա, կապիտալիստ, ունևոր դասակարգը և աշխատուոր, արդիւնաբերող, սեփականագուրկ, պրօլէտարիատ դասակարգը: Վերոյիշած երկու դէպքումն էլ՝ եթէ, այդ դասակարգերը սկսելով կայմվել, դրանցից վերջին, պրօլէտարիատ դասակարգը սկսում է պահանջ ունենալ ինքնապաշտպանութեան, իր գոյութեան համար փնտոելով աշխատութիւն ու դրա համար ծա-

խելով իր երկու բանող ձեռքերը, իր Փրկիչական սյ-
 փերը, միւս՝ բուրժուա դասակարգն՝ օգտվելով պրօ-
 ւէտարիատի այդ պահանջից, ճգնում է տիրապետող
 լինել երկրում և իր շահերի համաձայն կազմել երկրի
 հասարակական ու տնտեսական, իրաւական ու քաղա-
 քական պայմանները: Սա պահանջ է գրում այնպիսի
 պայմանների, որոնք խոշոր արդիւնաբերութեան մի-
 ջոց տան զարգանալու ազատ ու անարգել կերպով:
 Պահանջ է լինում հաղորդակցութեան դիւրութիւնների
 (երկաթուղիներ, ծովերային առևտրական քաղաքներ,
 չողենաւեր, խճուղիներ, հեռագրական թելեր, կանո-
 նաւոր պօստ և այլն, և այլն) մեծ վաճառանոցների,
 գործարանների, բանկերի, առևտրական, ակցիոներա-
 կան ընկերութիւններ հաստատելու, բնական ու ար-
 ուեստական բերքերի ազատ արդիւնաբերութեան ու
 շահագործութեան իրաւունքներն ու միջոցներն ունե-
 նալու, վաճառաչահ քաղաքներ ընդարձակելու, կեն-
 սական յարմարութիւնները շատացնելու և այլն, և
 այլն: Այդ բոլոր պահանջները փոխադարձաբար պայ-
 մանաւորում են միմեանց իրազործումը: Իսկ այդ ի-
 րազործման համար անհրաժեշտ է դառնում այն, որ
 քաղաքական, կառավարական ղեկն անցնէ այդ պա-
 հանջներն ունեցող բուրժուա դասակարգի ձեռքը, դա-
 դարէ այդ ղեկը մի միապետի բացարձակ սեփականու-
 թիւնն ու գործիքը լինելուց: Այդտեղից է, որ ծագում
 է ներկայացուցչական ազգային ժողովի և քաղաքական
 ազատութիւնների, այսինքն քաղաքացու ու մարդու ի-
 րաւունքների պահանջն առհասարակ և դա՛ մասնա-
 տրապէս՝ այնպիսի չափ ու սահմանով, որ բուրժուա

դասակարգն հանդիսանայ բացարձակ իշխողն ու տէրը
 երկրի: Այդտեղից է, կառավարական ղեկը ձեռք զցնե-
 լու պահանջը և այն գործադրելու համար ի նպաստ
 իր՝ բուրժուա՝ դասակարգի տնտեսական շահերի, որ
 անհրաժեշտութիւն է ծագում իրազործումն այնպիսի
 հասարակական-քաղաքական կարգերի, որոնք պէտք
 են այդ շահերի զարգացման, որոնք վերացնեն բոլոր
 նախկին հասարակական-քաղաքական պայմանները,
 քանի որ սրանք արգելք են բուրժուա դասակարգի
 զարգացման և նրա տնտեսական պահանջների ու նիւ-
 թական գօրացման, ուրեմն խոշոր արդիւնազործու-
 թեան զարգացման:

Եւ այդ ժամանակ պատմական այդպիսի մի բու-
 պէին, եթէ արդեւքները շարունակեն գոյութիւն ունե-
 նալ և աւելի ու աւելի զգացնեն իրանց ծանրութիւնը,
 իրանց դիմադրութիւնը, աւելի ու աւելի նեղեն ու ճնշեն
 աճելու ու տիրելու ընդունակ և տնտեսական առաջա-
 դիմութեան ոյժը կրող նոր դասակարգի պատմական
 տնտեսական ձգտումների իրազործման — այդ ժամա-
 նակ բնական կերպով առաջանում է արդեւքները բռնի
 կերպով ոչնչացնելու, հանրակացութիւնը բռնի կեր-
 պով յեղափոխելու պահանջը: այդ ժամանակ հնչում
 է յեղափոխութեան ժամը: Այդ յեղափոխութիւնը դառ-
 նում է անխուսափելի և միանգամայն վերանորոգիչ,
 առաջադիմական, այսինքն սահմանող հասարակական
 նոր օրէնքներ, նոր կարգեր, որոնք քանդում են հին
 կարգերի շատ աւելի նեղ սահմանները և նպաստում
 հասարակութեան, ազգի շատ աւելի մեծ՝ քան առաջ՝
 մասի կեանքի պահանջների իրազործմանը, շատ աւե-

լի ընդլայնում հասարակութեան ինքնազործութեան, ինքնուրոյնութեան ու ձգտումների աստարկչը կեանքի ամեն ճիւղերում: Այդպիսի պատմական վայրկեանին պայթեցաւ Փրանսական մեծ Յեղափոխութիւնը, որը հիմնովին յեղաշրջեց հանրակեցութեան նախկին բուրք, թէ՛ հասարակական, թէ՛ քաղաքական, թէ՛ տրնտեսական և թէ՛ մասնաւոր (intime) կերպերն ու յարաբերութիւնները: Անցեալ դարու վերջերի այդ մեծ Յեղափոխութիւնը, գործն էր ծագող և արդէն բաւական հասունացած բուրժուա դասակարգի, բուրժուադիւալի: Այդ Յեղափոխութիւնը պատմական արդիւնքն էր բուրժուա դասակարգի բնական ձգտումների, այն է՝ Վշրել իր զարգացման և իր նիւթական ոյժերը, կապիտալը կաշկանդող հասարակական շղթաները: Եւ իբրև իր այդ ձգտումների արդիւնք ու գործադրութեան միակ ու անհրաժեշտ քաղաքական պայման՝ բուրժուազիան իր մեծ Յեղափոխութեան որսուածով յայտարարեց աշխարհում մարդու և քաղաքացու իրաւունքները, քաղաքական ազատութիւնները, որ այնուհետև օժիտ եղաւ ամբողջ քաղաքակիրթ և զարգացման ձգտող ազգերին, մարդկութեան, իբրև «անրոնարարելի ու բնական իրաւունքներ» ամեն մարդու, ամեն ազգի մէջ: Եւ այդ հասարակական նոր օրէնքները, նոր կարգերն ու նոր սկզբունքները, միջոց տալով խոշոր արդիւնազործութեան ազատ զարգացման, ամենախիստ յեղափոխական պայմաններ եղան ի նպաստ քաղաքակիրթ մարդկութեան ընդհանուր առաջադիմութեան ու զարգացման: Բուրժուազիան անցեալ դարու վերջերն այն պատմական մեծ դերը կատարեց, ինչ որ

առաջիկային պէտք է խաղայ արդիւնաբերող դասակարգը, պրօլետարիատը: Եւ այս վերջինս կոչված է զատ աւելի մեծ դեր կատարելու բուրժուազական յեղափոխութիւնը եղաւ ազգութեան հիման վրայ՝ յանուն է՛ր դասակարգային տիրապետութեան, պրօլետարիատի սօցիալական յեղափոխութիւնը կատարվելու է յանուն մարդկութեան և մարդկութեան ինքնիշխանութեան:

II .

Այսպէս, հայութեան մէջ սկսած լինելով արդիւնաբերութեան կերպերի ներքին որոշ կերպարանափոխութիւն՝ ղէպի արդիւնաբերութեան խոշոր կերպեր և հէնց գրա շնորհով էլ պահանջ ծագելով հայութեան ընդհանուր կուլտուրական առաջադիմութեան — քաղաքական ազատութիւնների, քաղաքացու և մարդու իրաւունքների ձեռք բերելը հանդիսանում է նրա, հայութեան, համար իբրև պատմական պահանջ: Իսկ եթէ այդ պահանջի իրականացումն՝ նշանակում է ուղնչացումն ինքնիշխանական, միապետական կարգերի ընդհանուր հայութեան վրայից, Թիւրքահայ Դատի վերաբերութեամբ այդ կարգերի ուղնչացման ու քաղաքական ազատութիւնների ձեռք բերելու պահանջի հետ և հէնց իբրև հիմնական պայման այդ պահանջի գործադրութեան՝ Թիւրքահայերի քաղաքական ու ազգային գաւառմն է Թիւրքիայից, նրանց ազգային անկախութիւնն է. Թիւրքահայերի ազգային անկախութիւնը մէկ իրական, մի պատմական անհրաժեշտ հարկաւորութիւն է, մի կենսական պայման է նրա գոյութեան,

նրա ազգային կազմութեան, նրա ազգային ու մարդկային առաջադիմութեան համար: Հետեւաբար, այդ պահանջն էլ յայտնվում է իբրև մի պայմանաւորող անհրաժեշտ դրուժիւն թիւրքահայերի քաղաքական իրաւունքների իրականացման:

Այսպէս յանգեցանք այն կէտին, թէ միապետական, ինքնակալական կարգերի տապալումն և քաղաքական ադատութիւնների, սահմանադրական կարգերի հաստատումն—պատմական ու կենսական պահանջն է հայութեան: Բայց այստեղ աշխատաւոր արդիւնաբերող դասերի, ժողովրդի առաջադիմութեան ու շահերի տեսակէտից ծագում է մի հիմնական խնդիր: Տեսնենք թէ ինչումն է կայանում այդ խնդիրը:

Արդէն գիտենք որ խոշոր արդիւնագործութեան ամման ու զարգացման պահանջն առաջացնում է մարդկային ու քաղաքացու իրաւունքների, քաղաքական ադատութեան հաստատութեան պահանջը: Գիտենք նոյնպէս, որ խոշոր արդիւնագործութեան կապիտալական կերպերը կը զարգացնեն հայերիս մէջ այն՝ լոկ օրավարձով ապրող և բացի իր երկու ձեռքից ուրիշ ոչինչ սեփականութիւն չունեցող՝ ժողովրդային ընդհանրութիւն կազմող աղքատ ու աշխատաւոր դասակարգը, որ կոչվում է պրօլետարիատ: Եւ այսպէս տեսնում ենք, որ մի կողմից խոշոր արդիւնաբերութեան զարգացումը պայմանաւորում է հայութեան քաղաքական ադատութիւնների իրականացումն ու տնտեսական զարգացումը և ուրեմն նպաստում նրա ընդհանուր առաջադիմութեանը. բայց միւս կողմից շահունակ աճող ազգային հարստութիւնը նա կը դցէ մէկ

սոսանձնաշնորհված դասակարգի ձեռք և ահազին քանակութեամբ կը բազմացնէ աղքատ, վարձուր աշխատաւորներին, պրօլետարիի թիւը: Դա է խոշոր արդիւնաբերութեան զարգացման բնական ընթացքը. այդպէս է նա կատարվել ու կատարվում է քաղաքակրթված ազգերի մէջ: Դա էլ կը լինի նրա ընթացքը և Հայոց մէջ. ուր կապիտալական խոշոր արդիւնաբերութեան կերպերն արդէն դրել են «իրանց բոյնը»: Ահա հէնց այդ կէտը հայ ճշմարիտ առաջադէմ յեղափոխականներին, սօցիալիստներին պարտաւորեցնում է իրանց յեղափոխական ներկայ աշխատութիւնը նախագծել ու որոշել հայկական տնտեսական իրականութեան համապատասխան կերպով: Միանգամ սկսել են դոյութիւն ունենալ կապիտալական արդիւնաբերութեան կերպեր, որոնք ճակատագրական կերպով պէտք է ստեղծեն հայ պրօլետարիատ դասակարգ, որն այսօր ծագում է և՛ գնալով՝ շարունակ պիտի աճէ ու մեծնայ՝ շնորհով նոյն արդիւնաբերութեան կերպերի անընդհատ զարգացման, — հէնց դրա հիման վրայ մեր, սօցիալիստներին, այսօրւան քաղաքական պահանջները պէտք է համապատասխան լինեն այդ ծագող դասակարգի, աշխատաւոր ընդհանրութեան շահերին: Մենք պէտք է ձգտենք ձեռք բերել այնպիսի քաղաքական կերպեր, որ տան միջոցներ անմիջապէս նախաձեռնելու աշխատաւոր դասակարգի շահերի համաձայն՝ հասարակական աշխատութեան: Այդ պատճառով մեր այսօրւան յեղափոխական աշխատութիւնն էլ պէտք է ունենայ այնպիսի ընթացք ու եղանակներ, որ կարող լինենք ձեռք բերել մեր ապագայ աշխատութիւնը դիւրացնող քաղա-

քական կերպեր: Այդ կէտերից ուղղակի առաջանում է այսպիսի եզրակացութիւն.— պէտք է պարզել ու որոշել, թէ ինչ քաղաքական կերպեր են հարկաւոր, որոնք նպաստելով հայութեան տնտեսական ու կուլտուրական զարգացման ընդհանրապէս, այլ և, համաձայն լինելով հայկական իրականութեան, ստեղծեն նպաստաւոր պայմաններ հայ աշխատաւոր ընդհանրութեան շահերի ու ձգտումների ազատ արտայայտութեան և նրանց համապատասխան աշխատութեան համար:

Մենք տեսնք, որ հայութեան տնտեսական զարգացման համար անհրաժեշտ է ձեռք բերել քաղաքական ազատութիւններ: Բայց այդ ասելով դեռ ամեն բան չէ պարզվում: Դրանով միայն հասկացվում է յայտնի քաղաքական պայմանների դոյութեան հարկաւորութիւնը, մինչդեռ այդ պայմանների գործնական արտայայտութիւնը կարող է լինել սահմանափակ, որպէս կարող է լինել նաև ընդարձակ. այսինքն սահմանադրական կարգերը կարող են տալ ժողովրդին մարդու և քաղաքացու իրաւունքներ սահմանափակ և կամ ընդարձակ ծաւարով: Դրա մասին մենք արդէն ակնարկեցինք ասելի վերը: Աշխատաւոր ընդհանրութեան շահերի տեսակէտից՝ մենք պէտք է ձգտենք ձեռք բերել քաղաքական ընդարձակ ազատութիւններ, ընդարձակ ռամկավարական սահմանադրութիւն, ռամկավարական քաղաքական կերպեր: Ձեռք բերելով այդպիսի քաղաքական պայմաններ, մի կողմից արդէն ստեղծվելով միջոցներ տնտեսական ազատ զարգացման համար և առաջադիմութեան շաւղի վրայ դնելով առհասարակ հայութեան կուլտուրական կեանքը, միւս

կողմից աշխատաւոր ընդհանրութիւնը կը զարգանայ քաղաքականապէս, ընդհանուր և ուղղակի քուէարկութեան իրաւունքի միջոցով կարող կը լինի միջամտել քաղաքական գործերում, միջոցներ կունենայ մաքառելու կապիտալի ճնշումների դէմ համախմբվելու, միանալու ու կողմակերպվելու իրրև մէկ առանձին դասակարգ՝ իր առանձին շահերով, որպէս զի այդպիսով պատրաստ է իր մարդկային, հասարակական ու տնտեսական բարօրութեան ձգարիտ, վերջնական ազատման յաղթանակը: Բացի այդ, ռամկավարական քաղաքական կերպերը միջոց կը տան աշխատաւորներին հովանաւորող օրէնքներ՝ բանւորական օրէնադրութիւն հաստատելու, զգալի կերպով մեղմացնելու այն չարիքները, որ ճակատագրական կերպով պատճառում է կապիտալական արդիւնաբերութիւնը և կարճացնելու կապիտալի տիրապետութեան շրջանի տեւողութիւնը:

Ահա թէ ինչու համար ենք պահանջում քաղաքական ընդարձակ ազատութիւններ, ռամկավարական ընդարձակ սահմանադրութիւն, որն արդէն ինքն ըստ ինքեան կը ծառայէ ամբողջ ազգիս ազատ առաջխաղացութեանը դէպի ընդհանուր բարօրութիւն:

Մեր մինչև հիմա ասածներից յետոյ զալիս ենք այն եզրակացութեան, թէ հայ յեղափոխութեան անմիջական, մօտակայ նպատակն է՝ վերացումն միապետական, ինքնիշխանական բոլոր կարգերի և ձեռք բերել ռամկավարական քաղաքական ազատութիւն: Մեր մինչև հիմա ասածներից յետոյ նոյնպէս որոշվում է, թէ յեղափոխական որպիսի աշխատութիւն է պէտք: Մեր աշխատութիւնը պէտք է կենտրոնացնենք հայ աշ-

խատաւոր ընդհանրութեան վրայ, ինչպէս տարածելով նրա մէջ յեղափոխութեան իմաստի ու նպատակների գաղափարներն ու սկզբունքները, նոյնպէս պատրաստելով նրա մէջ ընդհանուր ազատամբութեան ոյժը, կազմակերպութիւնը: Այժմ հայ աշխատաւոր ընդհանրութիւնը կազմված է երկու գլխաւոր մասից - մէկը՝ փոքրաթիւր՝ քաղաքային բանւորները, միւսը՝ բնակավայրի մեծամասնութիւնը՝ գիւղացիները: Մենք ունենք խոշոր արդիւնաբերութեան կենտրոն կազմող վայրեր, ուր բանւորների շրջաններում պէտք է տարածել ու բացատրել նրանց քաղաքական ու տնտեսական շահերի սկզբունքներն ու գաղափարները, լուսաբանել սօցիալիստական ձգտումների նշանակութիւնը նրանց շահերի վերաբերութեամբ և կազմակերպել նրանցից բանւորական խմբեր՝ ընդունակ յեղափոխութեան ժամանակ պաշտպան լինելու իրանց քաղաքական ուսման վարական պահանջների և այդպիսով յօգուտ աշխատաւոր ընդհանրութեան ճնշում ու ազդեցութիւն գործելու յեղափոխական անցքերի ընթացքի վրայ: Բնակելով քաղաքներում ու դրանով կուլտուրայէս աւելի հասունացած քան գիւղացիները և մի և նոյն ժամանակ սօցիալիստական ձգտումներն ուղղակի արդիւնք լինելով բանւորական շահերի, հայ բանւորները յայտնվում են յեղափոխութեան ոյժերի գլխաւոր տարրը: Յետոյ կայ գիւղացի ժողովուրդը: Եթէ սա իր տնտեսական տարբեր պայմանների շնորհով զնդունակ չէ իւրացնելու սօցիալիզմի գաղափարները, սակայն իր հասարակական դրութիւնը, իր ձգտումներն ու շահերը միանգամայն մեծ դիւրութիւն են տալիս նրան ըմ-

բունելու ուսման վարական կերպերի պահանջը: Եւս աւելի: Նրա առաւել ընդունակ մասը, մտածելու կարող գլուխները կը յայտնվեն ջերմ ջատագով այդ կերպերի հէնց այն պատճառով, որ դրանք տալիս են միջոցներ արմատականապէս բարեկարգելու գիւղական ժողովուրդի հարկային սխառէմն ու հողային յարաբերութիւնները և օժտում են նրան քաղաքական ընդարձակ իրաւունքներով: Ռամկավարական քաղաքական կերպերն ըմբռնելով, գիւղական ժողովուրդի հասկացող մասը յեղափոխութեան միջոցին՝ իր դասի բազմաթիւ լինելու շնորհով՝ յայտնի հանգամանքներում կարող է մինչև անգամ վճռական դեր կատարել յօգուտ այդ կերպերի հաստատութեան: Հետեւաբար, յեղափոխութեան նպատակաշարժար ելքի աջողութիւնները դիւրացնելու համար՝ միանգամայն անհրաժեշտ է՝ գիւղական ժողովուրդի մէջ առատամբական ոյժեր կազմակերպելով հանդերձ՝ ընդարձակ պրօպագանդա տնել ուսման վարական սկզբունքների ու գաղափարների, գեղջկական դասի տնտեսական դրութեան բարելուման պայմանների ու անհրաժեշտ պահանջների, նրա աշխատութիւնն օրէնքներով հովանաւորելու և հասարակական ու կառավարական օժանդակութիւններ ձեռք բերելու մասին և այլն: Այդպիսով է, որ գեղջկական դասը, գէթ նրա հասկացող մասը, ուղղակի կերպով կը շահագրգռվէ ի նպաստ յեղափոխութեան և կը ձգտէ իր շահերի իրականացման, բարենորոգումներ (որոնք գետեղած ունենք կուսակցութեան Ծրագրի տնտեսական բաժնւմ), որոնք կարող են իրագործում ստանալ միմիայն ուսման վարական ընդարձակ սահմա-

նադրութեան կարգերի մէջ, երբ աշխատաւոր ընդհանրութիւնը կարող է քաղաքական ամեն իրաւունքներ ազատ կերպով գործածել և այդպիսով ազդել երկրի կառավարական գործերի ու օրէնքների վրայ:

Ահա՛ այն մօտակայ նպատակը, որի իրագործման պէտք է ձգտէ Կուսակցութիւնս. ահա՛ այն սրբապաշտական ու ազիտացիական յեղափոխական աշխատութիւնը, որ պէտք է անի նա, դրա հետ միասին քաղաքական ընդարձակ ազատութիւնները սրբապաշտական անելով ազդել միւս, սուրբ բարձր իսաւերում եւս:

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ժ


Հ Ն Ջ Ա Կ Ե Ա Ն Կ Ո Ւ Ս Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ե Ի

Գ Ա Ղ Ո Ւ Թ Ա Հ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

(Տեղ Բնդհ. Պատգմ. Ժողովի որոշումը 1925ից)

«Նկատի ունենալով Հայ Ժողովուրդի սատար մէկ զանգուածին եղերական ու հալածական վիճակը, իր ապրած օտար երկիրներու մէջ, նոյն իսկ քաղաքացիական տարրական իրաւունքներէն զրկուած ըլլալու հանգամանքը, այդ երկիրներէն արտաքսուելու սպառնալիքն ու վտանգը եւ ապաստարան մը չի գտնելու պարագան, եւ նկատի ունենալով գաղութներու հայ աշխատաւորութիւնը որպէս ամբողջութիւն. անդեկավար չի ձգելու եւ անոնց մէջ ազգայնական կուսակցութիւններու կողմէ Խորհ. Հայաստանի դէմ ըլլալիք ձեռնարկներու խմորումներուն դէմ արգելք հանդիսանալու անհրաժեշտութիւնը, Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը կը պահէ իր հաւաքական կազմն ու գոյութիւնը եւ ազգամիջեան կազմակերպչական դրութիւնը, կը գործէ ո եւ է երկրի մէջ լեկալ հողի վրայ, եւ իր գործունէութիւնը կը կեդրոնացնէ հայ աշխատաւորութեան մէջ մարքսիստական գաղափարները տարածելու, համաշխարհային ընկերային յեղափոխական կենդանի մէկ թեւը եղող Խորհ. Հայաստանը ամէն կերպ զօրացնելու եւ այս կերպով միջազգային ընկերային յեղափոխութեան յաղթանակին իր զոհողութեան ու պարտականութեան բաժինը բերելու աշխատանքին մէջ»



«Ազգային գրադարան»



NL0202343

